16 ՅՈՒՆԻՍ 1999 ՇԱԲԱԹ # 110 (1855)

Azg
Azg
armenian daily

Սերբիայի սինոդը պահանջել է Միլոշեւիչի հրաժարականը

ԵՐԵՎԱՆ, 15 ՀՈՒՆԻՍ, ՆՈՅՅԱՆ ՏԱՊԱՆ - ԱՇԱՏՈՒԹՅՈՒՆ: Սերբիայի ուղղափառ եկեղեցին պահանջել է Ս. Միլոշեւիչի հրաժարականը: Եկեղեցու բարձրագույն մարմնի՝ Սինոդի հունիսի 15-ին տարածած հայտարարությունում նշված է, որ Միլոշեւիչի կառավարությունը պետք է հրաժարական տա՝ ի շահ սերբ ժողովրդի ու նրա փրկության: Միաժամանակ Միլոշեւիչը հունիսի 15-ին հայտարարել է, որ Սերբիան կվերականգնվի, կբացվի ողջ աշխարհի առջեւ ու կմիանա Եվրոպային:

Ռումինիան օդային միջանցք չի տրամադրում Ռուսաստանի ինքնաթիռներին

ԲՈՒԽԱՐԵՍՏ, 15 ՀՈՒՆԻՍ, ՆՈՅՅԱՆ ՏԱՊԱՆ: Ռումինիան օդային միջանցք չի տրամադրի ռուսաստանյան ինքնաթիռներին, որոնք կոսովո կուղեւորվեն առանց ՄԱԿ-ի ԱԽ-ի հավանության: Այս մասին հայտարարել է Ռումինիայի նախագահ Է.Կոստանդինեսկուն: Օդային միջանցք ստանալու Մոսկվայի խնդրանքը պետք է ստանա երկրի խորհրդարանի հավանությանը

ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

25 նախարար՝ Վազգեն Սարգսյանի գլխավորությամբ

Ներքին գործերը ազգային անվտանգությունից անկախ, ֆինանսները՝ էկոնոմիկայից

ՆԱՐԻՆԵ ԴԻԼԲԱՐՅԱՆ

Հանրապետության նախագահ Ռոբերտ Քոչարյանը, հավատարիմ Սահմանադրության տառին եւ ոգուն, վարչապետ Վազգեն Սարգսյանի առաջարկմամբ հունիսի 15-ին հրամանագիր ստորագրեց, որով փոփոխվեց հայաստանյան կառավարության կառուցվածքը, ըստ այդմ՝ ձեւավորվեց 25 նախարարություն: Առաջին նորությունը երկար սպասված բաժանումն էր ներքին գործերի եւ ազգային անվտանգության նախարարության, երկրորդը՝ բավական անակնկալ, սակայն նույնքան անհրաժեշտ՝ ֆինանսների եւ էկոնոմիկայի նախարարության տրոհումը: Երրորդ նորությունը պետական եկամուտների նախարարության ձեւավորումն է, կառույց, որը միավորելու է հարկային տեսչության եւ մաքսային վարչության ստորաբաժանումները: Չորրորդը օրերս հիվ հարցերի նախարարի կարգավիճակի սահմանումն է, յուրօրինակ անպորտֆել նախարար, այս պաշտոնը վերապահվեց ԼՂՀ նախկին վարչապետ եւ պաշտպանության նախկին փոխնախարար Լեոնարդ Պետրոսյանին: Այլեւս լուծարված է տնտեսական եւ կառուցվածքային բարեփոխումների նախարարությունը, որը գլխավորում էր Վահրամ Ավանեսյանը: Այս նախարարության գործառույթները, հուսանք, առավել արդյունավետ կիրագործի էկոնոմիկայի նախարարությունը: Սեփականաշնորհման նախարարությունը, ի հեճուկս տարբեր կանխատեսումների, շարունակելու է գործառել Պավել Ղալթախչյանի գլխավորությամբ:

Եվ այսպես՝ 25 նախարարություն հայաստանյան ուրբերորդ կառավարության կազմում, որը հավակնություն ունի կոչվելու քաղաքական՝ շնորհիվ վարչապետ Վազգեն Սարգսյանի: Եթե անձնապես վերլուծենք կառավարության այս կազմը, ապա կարելի է համարել կես-քաղաքական, կես-արհեստավարժ, քաղաքական գիծը ապահովում են Հանրապետական կուսակցության սվարաթիվ անդամներ՝ Դավիթ Զադոյան, Ռազմիկ Մարտիրոսյան... եւ մեկ ՀԺԿ անդամ Ուբեն Տոնոյան, մեկ «Արժանապատիվ ապագա»՝ Արմեն Դարբինյան եւ դաշնակցական՝ Ռոլանդ Շառոյան: Մնացյալը իրենց ոլորտի արհեստավարժներ են եւ հնաբնակներ:

Տես էջ 8

ՇՈՒՄՆԵՐ

Նախագահն ու արտգործնախարարը նախապատրաստվում են այցերի

Ինչպես արդեն տեղեկացանք ՀՀ արտգործնախարար Վարդան Օսկանյանից, հունիսի 22-ին նա նախագահ Ռ. Քոչարյանի հետ կմեկնի Լյուքսեմբուրգ, ուր Կովկասի այլ հանրապետությունների նախագահների մասնակցությամբ տեղի կունենա Կովկաս եւ Եվրամիություն համագործակցության եւ գործընկերության պայմանագրի ուժի մեջ մտնելու արարողությունը: Նախատեսվում են նաեւ երկկողմ հանդիպումներ Շեւարդնաձեի եւ Ալիեւի հետ, որոնք շարունակությունն են երկու այլ՝ Մոսկվայի եւ Վաշինգտոնի հանդիպումների: Բնականաբար, այդ հանդիպումներում կքննարկվի նաեւ Լեռնային Ղարաբաղի խնդիրը: Այնուհետեւ, նախագահ Քոչարյանը կայցելի նաեւ Բրյուսել, ՆԱՏՕ-ի կենտրոնակայան, ուր կհանդիպի Խավիեր Սոլանայի հետ՝ քննարկելու ՆԱՏՕ-Հայաստան հարաբերությունները եւ «Գործընկերություն հանուն խաղաղության ծրագրին» մասնակցության խնդիրները: Այս հանդիպումից հետո նախագահ Քոչարյանը կվերադառնա Հայաստան, իսկ արտգործնախարարը կմեկնի Միացյալ Նահանգներ, որտեղ կանցկացվեն սեպտեմբերին կայանալիք Հայաստանի խորհրդաժողովի հերթական շրջանային հանդիպումները, որոնք այս անգամ տեղի կունենան Լոս Անջելեսում Միացյալ Նահանգների արեւմտյան համայնքների ղեկավարների հետ: Վերադարձին, օգտվելով ասիթից, Վարդան Օսկանյանը հանդիպումներ կունենա Վաշինգտոնում՝ պետքարտուղարությունում, քննարկելով երկկողմ հարաբերությունները, Մինսկի խմբի գործունեությունը եւ Լեռնային Ղարաբաղի խնդրի կարգավորման ընթացքը:

ՀԱՅՈՒՆ ԱՍՈՒՏՅԱՆ

Անդրկովկասյան 3 երկրները համագործակցության նոր փուլ են սկսում Եվրամիության հետ

Ինչպես արդեն հաղորդել ենք, հունիսի 22-ին Լյուքսեմբուրգում կկայանա Եվրոպական միության եւ անդրկովկասյան 3 հանրապետությունների նախագահների հանդիպումը: Եվրամիության ներկայիս նախագահող երկրում ՀՀ դեսպան Աշոտ Ոսկանյանը հաստատեց այդ տեղեկությունը: Հուլիսի 1-ից ուժի մեջ են մտնում Եվրամիության եւ Վրաստանի, Հայաստանի, Ադրբեջանի հանրապետությունների՝ Լյուքսեմբուրգում վաղօրոք կնքած երկկողմ հարաբերությունների վերաբերյալ պայմանագրերը, որոնք վավերացվել են մասնակից երկրների խորհրդարաններում: Առաջիկա գագաթաժողովը Եվրամիության հետ հիշյալ 3 հանրապետությունների համագործակցության նոր փուլ է սկսում՝ ներառելով թե՛ քաղաքական երկխոսություն, թե՛ տնտեսական, թե՛ ֆինանսական, թե՛ մշակութային համագործակցություն:

Արարողության պատասխանատվությունն ընկած է ԳԴՀ արտգործնախարար Յոշկա Ֆիշերի վրա: Բացի էդուարդ Շեւարդնաձե, Ռոբերտ Քոչարյան, Հեյդար Ալիեւ, ժակ Սանտեր քաղաքից, մասնակցելու են Հանս վան դեր Բրուկը, Լյուքսեմբուրգի մեծ դուքսը, Եվրոպական միության երկրների, անդրկովկասյան 3 հանրապետությունների արտգործնախարարները, Եվրամիությունում ՀՀ դեսպան Վիգեն Չիտեյանը, ԳԴՀ-ում ՀՀ դեսպան Աշոտ Ոսկանյանը: Հունիսի 22-ին մասնակից կողմերը հանդես են գալու համատեղ հայտարարությամբ, ինչի առանցքում կլինեն տարածաշրջանային անվտանգության, տնտեսական համագործակցության խնդիրները: Այժմ վերջնական տեսքի է բերվում հիշյալ հայտարարության տեքստը: Այն հստակ կդառնա օրեր հետո, գագաթաժողովպատասխանական նիստ-պատասխանական ճաշ ծանրաբեռն շրջան եզրվում է մամուլի ասուլիսով:

ԱՆԱՏՈԼ ՀՈՎՍԵՓՅԱՆ
Գերմանիա

Հռոմի պապը դժվար թե գա

ՎԱՐՇԱՎԱ, 15 ՀՈՒՆԻՍ, ԱՐՄԵՆՊՐԵՍ-ԻՏԱՐ-ՏԱՍՍ: Բարձր ջերմությամբ ուղեկցվող մրսածությունը փոփոխություններ է մտցրել այսօր Լեհաստանում Հռոմի պապի գտնվելու ծրագրում: Այսօր առավոտյան նա պետք է ժամերգություն անցկացներ Կրակովում:

Մեկ միլիոնից ավելի հավատացյալներ, որոնք դրա անցկացման վայր են ժամանել, այժմ աղոթում են Հովհաննես Պողոս երկրորդի առողջության համար: Նրա փոխարեն պատարագելու է կարդինալ Աջելո Սոդանոն: Եթե բժիշկներին չհաջողվի գեթ որոշ չափով կարգավորել Հռոմի պապի առողջական վիճակը, որն, ինչպես ենթադրում են, մրսածության հետեւանք է, հարցականի տակ կհայտնվի ոչ միայն նրա հետագա այցը Լեհաստանում, որն ըստ նախատեսվածի ավարտվում է հունիսի 17-ին, այլեւ առաջիկա ուրբաթ օրը Հայաստան մեկնելը՝ Ամենայն Հայոց կաթողիկոս Գարեգին Առաջինի հետ հանդիպելու համար, որը ծանր հիվանդ է:

ՀԱՄԱՌՈՏ

Ադրբեջանը քարոզչական նպատակ է հետապնդում

ԵՐԵՎԱՆ, 15 ՀՈՒՆԻՍ, ԱՐՄԵՆՊՐԵՍ: Հունիսի 14-ին Ադրբեջանի հետ ԼՂՀ հյուսիսային սահմանում տեղի ունեցած միջադեպի մեջ, ըստ ԼՂՀ պաշտպանության նախարար Սամվել Բաբայանի, ոչ մի նոր բան չկա: Հունիսի 15-ին թղթակցի հետ հեռախոսազրույցում մեկնաբանելով տեղի ունեցածը, Ս. Բաբայանն ասաց, թե վերջին երեք ամիսների ընթացքում ադրբեջանական կողմը փորձում է սահմանային գծի ամբողջ տարածքով բարելավել իր դիրքերը եւ ավելի մոտենալ ԼՂՀ բնակավայրերին: «Երեկվա միջադեպի մեջ որեւէ նորություն չկա. նման բան լինում է գրեթե ամեն շաբաթ», ասաց Ս. Բաբայանը: Նրա կարծիքով, այս անգամ միջադեպի շուրջ նման աղմուկ բարձրացնելով, Ադրբեջանը քարոզչական նպատակ է հետապնդում, փորձելով ցույց տալ, թե հայերը ցանկանում են ուժային միջոցներով հարցեր լուծել: «Սակայն դա անիմաստ է», ասաց ԼՂՀ պաշտպանության նախարարը:

Վանո Սիրադեղյանի եւ Վահան Հարությունյանի գործով մեղադրվում են 12 անձինք

ԵՐԵՎԱՆ, 15 ՀՈՒՆԻՍ, ՆՈՅՅԱՆ ՏԱՊԱՆ: ՀՀ ներքին գործերի նախկին փոխնախարար, ներքին գործերի հրամանատար Վահան Հարությունյանի, ՆԳ նախկին նախարար, ՀՀՇ վարչության նախագահ Վանո Սիրադեղյանի եւ մյուսների գործով մեղադրվում են 12 անձինք: Հայտնելով այս մասին, ՀՀ գլխավոր դատախազության մամլո քարտուղար Գուրգեն Ամբարյանը հաստատեց, որ գործով նախաքննությունն ավարտվել է, եւ գործով մեղադրյալներին ու նրանց պաշտպաններին մինչեւ հուլիսի 20-ը ժամանակ է տրվել գործի նյութերին ծանոթանալու համար:

ՄՈՍԿՎԱ

Սերժ Ջիլավյանի առեւանգումը ձախողվեց



«Հիմա որտե՞ղ է Սերժ Ջիլավյանը»: Այս հարցն ինձ հաճախ էին տալիս, երբ ես երեւանում էի: Նույն հարցը բավական հաճախ են տալիս նաեւ Մոսկվայում, հատկապես այն բանից հետո, երբ նրա անունը սկսեց հայտնվել Վանո Սիրադեղյանի գործի հետ կապված նյութերում:

Եվ ահա օրերս Սերժ Ջիլավյանը, որն առաջվա պես իրեն անվանում է Հայկական համաշխարհային ասամբլեայի նախագահ, մեկ անգամ եւս հայտնվեց Մոսկվայի իրավապահ մարմինների տեսադաշտում, այս անգամ որպես պատանդ:

Չեչենական մի հանցախումբ, որի պարագլխին վաղուց է փնտրում Մոսկվայի հասարակական կարգի պահպանության վարչությունը, առեւանգում էր պատանդների (որպես կանոն կովկասցիների), որոնք խնդիրներ ունեին օրինապահ մարմինների հետ եւ չէին դիմի ոստիկանության օգնությանը: Հանցախումբը փրկագին էր պահանջում նրանցից: Նույն նպատակով օրերս առեւանգվեց նաեւ Սերժ Ջիլավյանը, որը ճանիցս դատված է եղել, իսկ երբ բանտում հերթական ժամկետն անցկացրեց աղօրինաբար զենք պահելու համար, որոշ ժամանակ անհետացավ իրավապահ մարմինների եւ հասարակայնության տեսադաշտից, մեկնելով եվրոպական երկրներից մեկը:

Հանցագործները Ջիլավյանին բաց թողնելու համար պահանջեցին 700 հազար ամերիկյան դոլար: Իրավապահ մարմիններն այդ մասին տեղեկություն ստացան Ջիլավյանի աշխատակիցներից (ի դեպ, վերջերս որպես նրա մամլո քարտուղար ներկայանում է ոմն Աբասով): Հատուկ ջոկատին հաջողվեց կոտրել Կունցեւսկայա փողոցի այն բնակարանի դուռը, որտեղ ելուզակները պահում էին Ջիլավյանին, եւ իր նախկին «հաճախորդ» Սերժ Ջիլավյանին ազատագրելու հաջող գործողություն իրականացնել:

ԼՈՒՍԻԿ ՂԱՐԿԱՍՅԱՆ
Մոսկվա

digitised by A.R.A.R.@

ԱՐՄԵՆ ՏԵՐ-ՍԱՀԱԿՅԱՆԻ ԲԱՆԴԱ

Ինչո՞ւ անկեղծացան ամբաստանյալները

«Իշխանությանը տեղյակ պահել նշանակում է՝ իմ մահապատիժը պիտի ստորագրեի իմ ձեռքով»

Արշակ Շուխյանի դատարանում անկեղծ ցուցմունքներ տալու ցանկությունը, ի տարբերություն մյուս ամբաստանյալների, տարակուսանք էր առաջացրել: Ենթադրությունն այն էր, որ ամբաստանյալները հերթական անգամ դատարանում պետք է հրաժարվեին նախաքննական ցուցմունքներից կամ գոնե դրանց մի մասից: Արշակ Շուխյանի հարցում այս ենթադրությունն արդարացված չէր, նա միանգամից անկեղծացավ դրանով իսկ նոր ենթադրությունների տեղիք տալով: Ամբաստանյալ Շուխյանի կենսագրականը բավականին լույս է սփռում դատավարության անակնկալ ընթացքի վրա: Վերջինիս մորից տեղեկացանք, որ Շուխյանը մեծ համակրանք է ունեցել ռազմական գործի նկատմամբ, Մոսկվայում ավարտել է Սուվորովի անվան ռազմական դպրոցը, կարդացած է, դրանով է պայմանավորված նրա կիրթ խոսքը: 88 թ. վերադառնալով Հայաստան, սատարել է Համազգային շարժմանը եւ, ինչպես ինքը հայտնեց, բանակային ծառայություն է անցել Արմեն Տեր-Սահակյանի ջոկատում կամ նրերին զորքերում, դրանով իսկ ծերբազատվելով արցախյան պատերազմին մասնակցելու հարկադրանքից: 94 թ. ՀՀ գլխավոր դատախազության քննչական վարչության պետ Վլադիմիր Գրիգորյանի վրա կատարած մահափորձից հետո հանրության համար աննկատ Արշակ Շուխյանն ու Սուրեն Հարությունյանը ծերբակալվում են, իսկ Իսրայել Սարգսյանի ու Կամո Նարիբեկյանի նկատմամբ հետախուզում է հայտարարվում: Հիշեցնենք, որ մամուլը ժամանակին տպագրեց մահափորձ կատարած չորս անձանց լուսանկարները, որոնց նկատմամբ հետախուզում էր հայտարարված: Որոշ ժամանակ անց մամուլը տեղեկացրեց նաեւ նրանցից երկուսին հայտնաբերելու մասին, վերջաբանը սակայն անորոշ մնաց:

94 թ. Արշակ Շուխյանն ու Սուրեն Հարությունյանը ծերբակալվում են, երկու տարի նախնական կալանքի տակ պահվելուց հետո, 96 թ. դատավարություն է տեղի ունենում, Արշակ Շուխյանը դատապարտվում է 8 տարվա, իսկ Սուրեն Հարությունյանը 9 տարվա ազատազրկման: Շուխյանի հարազատներից տեղեկացանք, որ նախաքննության եւ դատավարության ընթացքում նրանք հրաժարվել են ցուցմունքներ տալուց: Աննկատ ընթացած դատավարության ժամանակ անուններ չեն հնչել, իսկ մեղադրանքի շրջանակը չի ընդլայնվել՝ սահմանափակվելով միայն քննչական վարչության պետի մահափորձով: Տեղեկացանք, նաեւ, որ կալանավայրում Շուխյանի նկատմամբ վերաբերմունքն այնքան էլ բայրացակամ չի եղել, նրա ընտանիքը նույնպես ուշադրության չի արժանացել դրսում գտնվող ընկերների, ժամանակի ղեկավարության եւ, հատկապես, ջոկատի ղեկավար Արմեն Տեր-Սահակյանի կողմից, որը Շուխյանի մոր հարազատներից է:

Նրանց այդ դժգոհության մասին, ամենայն հավանականությամբ, տեղյակ էին ներկա դատավարության պետական մեղադրողները, այդ պատճառով առաջարկեցին ամբաստանյալների հարցաքննությունն սկսել Արշակ Շուխյանից եւ Սուրեն Հարությունյանից, որը զգալիորեն կհեշտացներ նրանց գործը: Հունիսի 15-ին ավարտելով Շուխյանի հարցաքննությունը, նրանք անցան Սուրեն Հարությունյանին: Ամբաստանյալ Հարությունյանը նույնպես չհրաժարվեց առաջադրված մեղադրանքներից եւ իր ցուցմունքներով հաստատեց Հովհաննես Սուքիասյանի, Պանդիլյանի եւ Գրիգորյանի մահափորձերը: «Արմեն Տեր-Սահակյանից իմացա, որ պետական շահերից ելնելով պիտի կազմակերպենք Հովհաննես Սուքիասյանի սպանությունը: Սպանությանը մասնակցել ենք ես, Ալիկ Գրիգորյանը, Արթուր Ալոյանը, հետո վերադարձել ենք ՀՀՇ վարչության շենք, Արմենին տեղեկացրել ենք այդ մասին, նա էլ հանձնարարել է վերացնել առեւանգված մեքենան»: Մահափորձերից հետո մեքենաներն այրել են Հրազդանի կիրճում: Նրա ասելով, մահափորձերի իրագործման դերերը Ա. Տեր-Սահակյանն էր բաշխում, ինքը վարորդն է եղել:

Դատապաշտպանի այն հարցին, որ կարող էին հրաժարվել, ամբաստանյալ Ս. Հարությունյանը պնդեց, որ մինչեւ մահափորձերը համոզելու դեպքեր են եղել եւ կարելի էր վախենալ հրաժարվելուց: Դատապաշտպաններից մեկ ուրիշ հարցին միգուցե տեղյա՞կ պահվեր իշխանություններին, օրինակ, դատախազությանը, պատասխանեց՝ «Եթե դիմեի ինչ-որ համակարգի, նշանակում է, իմ մահապատիժը պիտի ստորագրեի իմ ձեռքով»:

ՍԱՌԱ ՊԵՏՐՈՍՅԱՆ

ՀԱՄԱՌՈՏ

Դեղատներից առգրավվել են կեղծ դեղեր

ԵՐԵՎԱՆ, 15 ՀՈՒՆԻՍ, ԱՐՄԵՆՊՐԵՍ: Երեք ամիս շագանակագեղձի բորբոքումով տառապող հիվանդը կանոնավոր կերպով օգտվել է «Պղնձե հեծյալ» հոմեոպաթիկ դեղից, բայց անարդյունք:

Պատրաստուկի քիմիական տարրալուծումը, որ անցկացվել է ՀՀ առողջապահության նախարարության դեղերի եւ տեխնոլոգիաների գործակալությունում, ցույց է տվել, որ այդ ամբողջ ընթացքում հիվանդն ընդունել է ջրի հետ խառնած սովորական սպիրտ:

Դեղերի որակի նկատմամբ վերահսկողության լաբորատորիայի ղեկավար, պրոֆեսոր Ալեքսանդր Փանոսյանի խոսքերով, դա կեղծ դեղ է, դրա պիտակի վրա բացակայում է բաղադրության մասին նշումը եւ, այսպես կոչված, «Տալիոն» ֆիրմայի հասցեն: Ընդսմին, այն գրանցված չէ Հայաստանում:

Դեղատներից առգրավվել է նաեւ մեկ այլ՝ «Ացեդում» պատրաստուկը, որն, իբր, նախատեսված է ալկոհոլիզմով տառապող հիվանդների համար: Դրա բաղադրության մեջ այդ նույն սպիրտն է ջրով:

Ա. Փանոսյանն ասաց, որ վերջին տարիներին լաբորատորիայում խոտանվել է շուրջ 40 դեղ:

4 տարում արհեստական բեղմնավորման 500 դրական արդյունք

ԵՐԵՎԱՆ, 15 ՀՈՒՆԻՍ, ՆՈՅՅԱՆ ՏԱՊԱՆ: Հայաստանում անպտուղ ամուսնական զույգերի թիվը հասնում է 28%-ի, որը 13%-ով գերազանցում է Առողջապահության համաշխարհային կազմակերպության ստանդարտը: Այդ իսկ պատճառով անպտղությունը դարձել է եւս մեկ սոցիալական պրոբլեմ՝ ի լրումն ծնելիության ցածր մակարդակի: Այս մասին «Նոյյան տապանի» թղթակցին հայտնեցին Հանրապետական հիվանդանոցին կից արհեստական բեղմնավորման լաբորատորիայում: Ինչպես նշեց լաբորատորիայի վարիչ Վահան Վարդապետյանը, անպտղության հիմնական պատճառներն են Հայաստանի տարածքում վեներական հիվանդությունների տարածումը եւ ժամանակին բժշկի չդիմելը:

Չորս տարում լաբորատորիայում գրանցվել է արհեստական բեղմնավորման ավելի քան 500 դրական արդյունք: Բոլոր հղիությունները ավարտվել են նորմալ ծնունդով: Եւս 40 կանայք հատուկ բուժումից հետո կարողացել են հղիանալ բնական ճանապարհով: Բուժման արժեքն է 27-33 հազ. դրամ (55-65 դոլար): Ինչպես նշեց Վ. Վարդապետյանը, լաբորատորիայի ժամանակակից սարքավորումների շնորհիվ հաջողվել է դրական արդյունքի հասնել 40 տարեկանից բարձր կանանց մոտ:

Մախային վարչությունն իր շենքը չունի

ԵՐԵՎԱՆ, 15 ՀՈՒՆԻՍ, ՍՆԱՐՔ: Հայաստանի մախային վարչությունը, որն ապահովում է բյուջետային մուտքերի կեսը, իր շենքը չունի, իսկ զբաղեցրած շենքը նրան վարձակալության է տվել հայտնի ձեռներեցներ Հայրապետյանների ընտանիքը: Ճիշտ է, Մախային վարչությունից վարձակալության վճար չեն պահանջում, եւ վարչությունը չի վճարում: Ի դեպ, ընթացիկ տարվա սկզբից զգալիորեն վատացել է գերատեսչության ֆինանսական վիճակը: Հունվարի 1-ից լուծարվել է վարչության արտաքին հիմնադրամը, որը ծեւավորվել էր ապրանքների ներմուծման եւ արտահանման փաստաթղթերի ձեւակերպման ծառայության դիմաց գանձվող 0,3 տոկոսի հաշվին: Շենքային հարցը հավանաբար լուծվի նոր կառավարության կազմվելուց հետո:

Հայ-ֆրանսիական համալսարանը կբացվի աշնանը

Ընթացիկ աշունն արգասավոր կլինի հայ-ֆրանսիական կրթամշակութային համագործակցության համար: փաստաթղթային ձեւակերպման գործընթացում է եւ ամենայն հավանականությամբ սեպտեմբերից իրավաբանորեն եւ ֆիզիկապես շարք կմտնի ֆրանս-հայկական համալսարանը Հայաստանում Ֆրանսիայի դեսպանատան, ՀՀ կրթության եւ գիտության նախարարության եւ Հայկոոպի համատեղ նախաձեռնությամբ: Հայ-ֆրանսիական «համալսարանական գործընկերությանը» տեխնիկապես կմասնակցեն նաեւ Փարիզ XII համալսարանը, Փարիզի հյուրանոցավարության «Ժան Դրուան» դպրոցը, Ռոնի մասնագիտական կրթության ընկերությունը (ՌՄԿԸ) Ռոն-Արմենի կրթական փոխանակումների կազմակերպության (ՌԱԿՓԿ) հետ համատեղ: Մասնագիտությունների ցանկի ընդլայնմանը զուգահեռ կներգրավվեն նոր գործընկերներ, մասնավորապես բուհական տնտեսությունների շահագործման կառավարման ոլորտից:

Նախաձեռնողների միջեւ աշխատանքի հսկակ բաժանում կլինի: դեսպանատունը կստանձնի դասավանդման (ուսուցման, ծրագրային, կադրային խնդիրների) կազմակերպման եւ վերահսկողության գործառույթներ, նախարարությունը կաջակցի համալսարանի ակադեմիական աջակցությունը (կճանաչի պետական կարգավիճակը), Հայկոոպը կլուծի շենքային խնդիրներ՝ ապահովելով վարչական կառավարումը եւ կենսագործունեությունը: Երեկ դեսպանատանը հրավիրված մամլո ասուլիսում ներկայացնելով համատեղ համալսարանի նախագիծը, դեսպանատան մշակութային կցորդ Միշել Մախիմովիչը դժվարացավ հայտնել ապագա համալսարանի հասցեն, սակայն հանգամանորեն նկարագրեց տեղը: Բուսաբանական այգու մերձակայքում, ճարտարագիտականի լքված շենքի հարեւանությամբ, խորհրդային կայսրության մայրամուտին կառուցված ուսումնարանական մասնաշենքը, որ ժամանակի ընթացքում պահպանվել եւ ներկայումս կարգի է բերվում Հայկոոպի ջանքերով:

ՍՊՈՒՏՆԻԿ

Մեկնարկային դրությամբ ֆրանս-հայկական համալսարանում նախատեսվում է երկու մակարդակի ուսուցում համալսարանական եւ մասնագիտական/միջնակարգ կրթության ատեստատների հիման վրա: Կգործեն երեք ֆակուլտետներ՝ իրավունքի, տնտեսագիտության, կառավարման, արդյունաբերական կառուցեի, գեղարվեստական վարսահարդարման, սեղանի ձեւավորման արվեստի դասավանդմամբ: Գործող ֆակուլտետները հետագայում կհամալրվեն նորերով՝ օդտիկայի, խոհանոցի եւ գյուղատնտեսության, ավելի ուշ՝ քառալեզու քարտուղարների ուսուցման (հայերեն, ֆրանսերեն, ռուսերեն եւ անգլերեն), հայերենը եւ ֆրանսերենը դարտադիր առարկաների կարգավիճակ կունենան:

Համալսարանում կդասավանդեն ինչպես մրցույթով ընտրված հայ, այնպես էլ Ֆրանսիայի բուհերից հրավիրված մասնագետներ, որոնք, բնականաբար, կդասավանդեն ֆրանսերենով: Անհրաժեշտության դեպքում կկիրառվեն նաեւ ռուսերենը եւ անգլերենը: Ուսուցումը վճարովի կլինի (հայկական բուհերում ընդունված վարձավճարների սահմաններում): վարձաչափը կորոշի դեսպանատունը: Շրջանավարտները կստանան հայ-ֆրանսիական համատեղ կամ առանձին հայկական եւ ֆրանսիական դիպլոմներ, որ, համապատասխան ֆինանսավորում հայթայթելու դարագայում, հնարավորություն կտան ուսումնառությունը շարունակելու Ֆրանսիայում: Համալսարանի ֆակուլտետների կազմակերպման ֆինանսավորումն սկզբնական շրջանում կհոգա դեսպանատունը՝ բացառությամբ այն բաժինների, որոնց ֆինանսավորումն ստանձնել են ՌՄԿԸ-ն եւ ՌԱԿՓԿ-ն, կընդունվեն մասնավոր աջակցություններ: Համալսարանը կդառնա ֆրանսիական հյուրասիրության եւ մշակույթի տարածման կենտրոն (կկազմակերպվեն ցուցահանդեսներ, սեմինարներ եւ գիտաժողովներ), կգործեն հանրակացարան, ուսանողական ռեստորան, որը վերադասրասման կենտրոն կծառայի ռեստորանավարության բաժնի ուսանողների համար:

Համալսարանում սովորելու ցանկություն ունեցողները հրավիրվում են Ֆրանսիայի դեսպանատուն՝ նախնական գրանցման: Ուսանողները կընտրվեն տեսավորման սկզբունքով, առանց տարիքային սահմանափակման: «Հուսով եմ, 60-ն անց դիմորդներ չենք ունենա», կատակեց դրն Մախիմովիչը հավատալով, որ ուսման որակը երաշխավորվում է:

ԼԻԼԻԹ ՊՈՂՈՍՅԱՆ

■ *ՀՀ ֆինանսական տուկայում վստահություն է տիրում դեռեւս չձեւավորված նոր կառավարության նկատմամբ: Ըստ ՀՀ ԿԲ տեղեկատվական կենտրոնի, հունիսի 15-ին կայացած 182 օր մարման ժամկետով գանձապետական կարճաժամկետ դարատոմսերի գնման հայտերը գերազանցել են բողարկման ծավալը միանգամայնանաբար, 572 մլն 500 հազար եւ 500 մլն դրամ): Հայտերից 3 մլն դրամը եղել են ոչ մրցակցային՝ ամբողջությամբ գանձապետական դարատոմսի համակարգով: ԴԿՊ ստուգում վաճառված դարատոմսերի նկատմաբերությունը կազմել է 57.62 տոկոս, ինչը 2.3 տոկոսային կետով ավելի է, քան նախորդ ստուգումներում: Վաճառվել է ըստ անվանական 500 մլն դրամի դարատոմս, իրացումից ստացվել է 387 207 500 դրամ: Ստուգմանը մասնակցել են 9 դիլեր բանկեր եւ գանձապետական դարատոմս: ԼՏ*

«ԱԶԳ» ՕՐԱԹԵՐԹ
Հրատարակության Ը տարի
Հիմնադիր եւ հրատարակիչ
«Ազգ» թերթի հիմնադիր խորհուրդ
Երեւան 375010, Հանրապետության 47
Խմբ 529353, AT&T (3742) 151065,
e-mail INTERNET azg2@arminco.com
Գլխավոր խմբագիր
ՅԱԿՈԲ ԱՎԵՏԻՔԵԱՆ / հեռ. 521635
Խմբագիր
ՊԱՐՈՅՐ ՅԱԿՈԲԵԱՆ / հեռ. 529221
Տնօրեն
ՀՐԱՅՐ ՁՈՐԵԱՆ / հեռ. 562863
Համակարգչային ծառայություն / 562941
Apple Macintosh
համակարգային շարվածք «Ազգ» թերթի
Յդումը «Ազգին» դարտադիր է
Նիւթերը չեն գրախօսւում ու չեն վերադարձւում
«AZG» DAILY NEWSPAPER
Editor-in-chief
H. AVEDIKIAN / phone: 521635
47 Hanrapetoutian st.,
Yerevan, Armenia, 375010

digitised by A.R.A.R.@

տեղական

ՀԵՏԸՆՏՐԱԿԱՆ

Նորից չի՞ լինի «Մեր դեմ խաղ չկա»

Ամ ընտրությունները «մարսելուց» հետո մենք բոլորս անմիջական ականատեսը դարձանք նոր ընտրությունների ու նշանակումների արդեն խորհրդարանի ներսում եւ նրա «շուրջ»: Որքան էլ գոհ կամ դժգոհ լինենք Ամ ընտրություններից հետո հանրապետությունում առաջացած քաղաքական նոր իրավիճակից, ուժերի ստեղծված հարաբերակցությունից, դրա իրական լավն ու վատը հետո, կյանքով պիտի երեւա: Մեզ մնում է հավատալ լավին եւ շնորհավորելով իշխանության եկած ուժերին՝ ժամանակ տալ իրենց դրսեւորելու:

Սակայն ուզենք թե չուզենք՝ հասկանալ «Միասնություն» դաշինքի ամենառաջին քայլերին մեծ նշանակություն ենք տալու, դրանց մեջ նրա գերակշռություն ձեռք բերած քաղաքական ուժի գոնե առագա գործելակերպը նշող (երբեմն գուցե չափազանցված) իմաստ ենք դնելու: Եվ այս տեսակետից խորհելու նյութ է տալիս մասնավորապես առաջին նիստում խորհրդարանի ղեկավարության կատարված ընտրությունն իր բոլոր կողմերով: Եթե Ամ նախագահի, իսկ փոքր ուշ նաեւ վարչապետի հարցում ամեն ինչ տրամաբանորեն պատճառաբանված էր «Միասնության» քանակական անվիճելի առավելությամբ, ապա փոխխոսնակների գեթ մեկ այլընտրանքային «աթոռի» բացառումը զգուշավորություն, եթե չասենք անհանգստություն է հարուցում: Եվ այստեղ, թվում է, մշտական հանձնաժողովներից 3-ի նախագահների հարցում արված «զիջումը» առանձնապես շատ բան չի փոխում: Թերեւս կարելի է կարծել, որ կամ խորհրդարանի մյուս քաղաքական ուժերը սկզբից ելեք «ղեկն» ու դրանից բխող գրեթե ամբողջ պատասխանատվությունը կամովին հանձնում են մեկ քաղաքական ուժի, կամ վերջինս ինքն է այդպես կամենում եւ ստեղծված հիմքի վրա այսուհետեւ էլ միշտ պարտադրելու է իրենը՝ առանձնապես մոտ չթողնելով մյուսներին: Ամ առաջին նիստին պատգամավոր Վանո Սիրադեղյանը չէր մասնակցում, բայց այս անգամ կարծես ուրիշ մեկը լռեցյալ ասում էր ժամանակին մեկ այլ նման հաղթանակից հետո նրա արտասանած (կամ նրան վերագրվող) հայտնի խոսքերը՝ «Մեր դեմ խաղ չկա»:

Թող որեւէ մեկը խոսքիս մեջ կանխակալություն չփնտրի: Պարզապես այստեղ մեր հավաքական տառապանքը փորձ ունի: Ժամանակին մեկ անհակակշիռ քաղաքական ուժի իշխանությունը դեպի անկում տարավ աշխարհի թեկուզ իր՝ իսկ ղեկավարությամբ կառուցված հզորագույն մի երկիրը: Իսկ մեկ այլ այդպիսի անհակակշիռ ուժը մինչեւ վերջ ճանդեց մեր մնացած երկիրը... Քանդողը հակակշռի բացակայությունն էր: Տա Աստված, որ այս անգամ մեր մտահոգությունն անտեղի դուրս գա: Բայց պետք չէ ասել, թե Ամերիկայում կամ Եվրոպայի այսինչ ու այնինչ երկրում նման դեպքում ինչն է ընդունված: Գուցե այդպես ընդունված է կայացած իրավական, օրենքի բացարձակ գերակայությամբ եւ զարգացած քաղաքացիական հասարակությամբ երկրում:

Մերն ուրիշ է:

ԳԵՂԱՄ ՄԿՐՏՉՅԱՆ

Գյումրի

Գյումրիի քաղաքապետարանն ընտրացուցակների հետ կապված մեղադրանքները չի ընդունում

Գյումրիի քաղաքապետարանի լրատվական ծառայությունը հանդես է եկել մամուլի համար հաղորդագրությամբ, որում մասնավորապես նշում է հետեւյալը: Հետընտրական այս օրերին տարբեր կազմակերպություններ եւ անհատներ, որոնք հիմնականում անհաջողության են մատնվել Ամ ընտրություններում, փորձում են իրենց մեղքը բարդել համայնքների ղեկավարների վրա՝ մատնանշելով ցուցակներում եղած անճշտությունները: Ընտրությունների նախապատրաստության փուլում Գյումրիում, քաղաքապետի հանձնարարությամբ ԲՀՏ-ներից, քաղաքային կոմիտեներից ստացվել են ընտրելու իրավունք ունեցող բնակիչների ցուցակները: Ըստ այդ ցուցակների, ընտրողների թիվը կազմել է 109.688 մարդ, որոնց անունները մուտքագրվել են համակարգչի մեջ: Վերջին 35 օրում քաղաքապետարանի հետեւողական աշխատանքի շնորհիվ հայտնաբերվել եւ ընտրական ցուցակներից հանվել են 546 մահացածի, 168 հաշվառումից դուրս եկածների եւ 1803 կրկնվող անուններ: Ներկայացված դիմումների հիման վրա ցուցակներում ավելացվել է 6911 անուն, եւ ընտրողների վերջնական թիվն ընտրացուցակներում կազմել է 115.300 մարդ: Ըստ հաղորդագրության հեղինակների, նման աշխատասար գործողություն առաջին անգամ էր կատարվում, ուստի վրիպումները չեն բացառվում: Քաղաքապետարանի լրատվական ծառայությունը հայտնում է, որ ցուցակները կազմվել են հանձնարարված ժամկետներում, եւ եթե ոմանք «շահագրգռված չեն եղել» եւ չեն ներկայացել ճշտելու իրենց անունները ցուցակներում կամ չեն դիմել դատարան, ապա դա «տվյալ անձանց խնդիրն է»:

Հաղորդագրության մեջ նշվում է, թե ժամանակին մասնավորապես կուսակցություններին ու հասարակական կազմակերպություններին առաջարկվել էր ակտիվորեն մասնակցել ցուցակների կազմման (՞) եւ ստուգման աշխատանքներին, սակայն որեւէ կազմակերպություն չի ցանկացել ջանքեր գործադրել, որպեսզի ընտրացուցակներն «ավելի կատարյալ դառնային»:

Գյումրիի քաղաքապետարանը, հետագա ընտրությունների ընտրացուցակների ճշգրտությունն ապահովելու մղումով, այժմվանից խնդրել է բոլոր նրանց, ովքեր ընդգրկված չեն ցուցակներում կամ նկատել են այլ վրիպակներ ու անճշտություններ, դիմել քաղաքապետարան հետագա թյուրիմացությունները բացառելու համար:

Գ. Մ.

ԸՆԴԴԵՄ ՀՈՌՈՏԵՍՈՒԹՅԱՆ

Կյանքը վերջացած չէ, պարոնա՛յք

Դեռ կարելի է ապրել եւ գուշակություններ անել

Հայաստանում, հատկապես 1998 թ. հիշարժան փետրվարից հետո, նոստրադամուսների թիվը կտրուկ ավելացել է: Հիմա ով չի ծուլանում՝ գուշակում է. որպես կանոն, անախորժություններ, քաղաքական ցնցումներ, ներիշխանական ճգնաժամեր եւ արտակարգ այլ իրավիճակներ՝ անպայման աղետալի հանգուցալուծումներով: Շարագուշակներ կանխագուշակումների մերթը բացեց ՀՀՇ նախագահ Վանո Սիրադեղյանը, որը, պատերազմի վերսկսման եւ ՀՀ նախագահի վերահաս հրաժարականի «փրկարար» վարկածը մի անգամ շրջանառության մեջ դնելով, հետագայում պարբերաբար եւ բարեխղճորեն թարմացնում էր դարակազմիկ այդ իրադարձությունների ժամկետները: Դուբայ մեկնելուց հետո պայծառատեսությունը լքեց Վանիկ Սմբատիչին, իսկ նախկին կանխատեսումների վերջին ժամկետը՝ 1999 թ. գարունը, վաղուց անցել է, հետեւաբար կարելի է գոհունակությամբ արձանագրել, որ առնվազն պատերազմի վտանգից խուսափել ենք եւ, ուրեմն, դեռ կարելի է ապրել եւ շարունակել արհեստավարժ կանխատեսումների շարանը:

Երկար ու ապարդյուն (գրեթե մեկ տարի) կանխագուշակում էինք վարչապետ Արմեն Դարբինյանի հրաժարականը, եւ, վերջապես, «հաջողեցինք»: Ճիշտ է, ոչ մեր կանխատեսած ժամկետներում եւ մեր կանխատեսած սցենարով, այլ իբրեւ տրամաբանական հետընտրական հանգուցալուծում, սակայն կարեւորը «հաջողությունն» է, այլապես կարող էինք հիասթափվել եւ մեկընդմիշտ հրաժարվել գուշակի հրապուրիչ «մշակույթում» արվեստավարժվելու պրակտիկայից: Ինչ անենք, որ ՀՀՇ նախագահին պատգամավորական անձեռնմխելիությունից զրկելու վերաբերյալ ՀՀ գլխավոր դատախազի հայտնի միջնորդությունից հետո Սիրադեղյանի եւ ՀՀՇ վարկանիշի կտրուկ աճի կանխատեսումը «փուստ» անցավ, նրա նախաամանորյա հեռուստելույթից հետո մեր կանխատեսած Վազգեն Սարգսյան- Սիրադեղյան «դավադրությունը» չիրականացավ: Չի սխալվում նա, ով չի «աշխատում»: Փոխարենը 100 տոկոսով հաստատված ենք, որ նույն Սիրադեղյանի վերադարձը Դուբայից համաձայնեցված եւ արտոնված էր պատասխանատվության նախարարի (այժմ՝ վարչապետի) կողմից եւ, բնականաբար, պիտի գուշակեն, որ ՀՀՇ նախագահին պատասխանատվության ենթարկելու (ոչ թե ՀՀՇ նախագահի) երգը երգված է. Սմբատիչը կարող է հանգիստ լինել:

Մինչեւ ընտրությունները սիրով կանխագուշակում էինք, որ Վազգեն Սարգսյանն ուր որ է գահընկեց է անելու Ռոբերտ Քոչարյանին (եթե նույնիսկ ասում էր, թե նման մտադրություն չունի): Ընտրություններից հետո գուշակությունների դաշտն ընդարձակվել է: Իրավիճակը փոխվել է. ժամանակիս ամենազդեցիկ գործիչներից երկուսը՝ Կարեն Դեմիրճյանն ու Վազգեն Սարգսյանը միավորվել են, «միասնաբար» հաղթել ընտրություններում, պատկառելի մեծամասնություն ապահովել խորհրդարանում: Ճիշտ ժամանակն է կանխագուշակելու, որ «Միասնության» միասնությունը քվացյալ է եւ մոտ ապագայում կտարրալուծվի: Շուգահեռաբար նախագուշացնել, որ նոր-նոր ձեւավորված խորհրդարանը կարճ ժամանակում կվարկաբեկվի՝ արտահերթ խորհրդարանական ընտրությունների բավականություն պատճառելով ընտրությունից ընտրություն քաղաքական այրերի եւ պատգամավոր դառնալու ցանկություն դրսեւորած տնտեսական գործիչների ուշադրության կենտրոնում հայտնվող ընտրողին:

Նոստրադամուսին գերազանցելու ինչպիսի՞ եզակի հնարավորություն է ընձեռում վարչապետի պաշտոնում Վազգեն Սարգսյանի նշանակումը: Եթե նախկինում (իգուր) կանխագուշակում էինք, որ պաշտպանության նախարարն է «կուլ տալու» նախագահին, ապա այսօր արդիական է հակառակ՝ վարչապետի (Վազգեն Սարգսյանի)՝ նախագահին «կուլ գնալու» տարբերակը: Եթե սա էլ չստացվի, կարելի է գուշակել, որ կառավարման նախագահական համակարգից պառլամենտականին կամ վարչապետականին ենք անցնելու. հո չի կարելի սուտուփուս հետեւել, թե «մեծ եղբայրն» ինչպես է փորձում երկիրը դուրս բերել «փոսից» (ինչպես կասեր ԱԺՄ նախագահը, որն այս անգամ հրաժարվել է բոնապետություն կանխագուշակելու սովորությունից, փոխարենը՝ ընտրություններից առաջ նախագահի համար անգլիական թագուհու կարգավիճակ կանխագուշակելով, մեզանում այդպես չի լինում...

ԼԻԼԻԹ ՊՈՂՈՍՅԱՆ

Սերգեյ Բաղդասյան. «Միասնությունը» պետք է կրի կառավարության գործունեության ողջ պատասխանատվությունը

ԵՐԵՎԱՆ, 15 ՀՈՒՆԻՍ, ՍՆՍՐԲ: Հայաստանի Կոմունիստական կուսակցության ղեկավար Սերգեյ Բաղդասյանն անցուրջ համարեց կառավարության կազմում տարբեր քաղաքական ուժերի ներկայացուցիչների ներգրավելու հնարավորության մասին հայտարարությունները: «Եթե «Միասնություն» դաշինքը կարողացավ բոլոր ճիշտ եւ ոչ ճիշտ ձեւերով իր համար մեծամասնություն ապահովել, ապա թող նա ձեւավորի կառավարությունը եւ կրի ողջ պատասխանատվությունը», հայտարարեց Սերգեյ Բաղդասյանը:

Նրա խոսքերով, այն լուրերը, թե ՀԿԿ-ին առաջարկում են նախարարական պորտֆելներ, գալիս են դեռեւս վարչապետ Արմեն Սարգսյանի ժամանակներից, հետո նաեւ Ռոբերտ Քոչարյանի: «Այդ լուրերը թեւածում են օդում: Մենք միանշանակ ասում ենք, որ չենք կարող մտնել կառավարություն միայն հանուն նրա, որ ինչ-որ տեղեր զբաղեցնենք»: Հարցն այն է, թե մենք որքանով կներգծվենք երկրի համար պատասխանատվություն կրող թիմի մեջ: Կարծում եմ, որ այդ կառավարությունը դժվար կլինի ձեւավորել: Մեր կարիքը ժամանակը կզգա, միգուցե դա կլինի հաջորդ կառավարության ժամանակ: Ես հավատացած եմ, որ մեզ հնարավոր չէ առնել նախարարների պորտֆելներով, արտոնություններով եւ այլն», ասաց Բաղդասյանը:

Խոսելով հունիսի 18-ին խորհրդարանում կառավարության ծրագրի ներկայացման մասին, ՀԿԿ ղեկավարը նշեց, որ մի քանի օրում հնարավոր չէ ընդունելի ծրագիր գրել, սակայն կոմկուսին հիմնականում հետաքրքրում է, թե Վազգեն Սարգսյանի նախարարների կաբինետը ինչպես կվերաբերվի Համաշխարհային բանկի նախագահ Ջեյմս Վոլֆենսոնի այն հայտարարությանը, թե «Հայաստանը պետք է դադարի մտածել ծանր արդյունաբերության վերածնման մասին, ինչը պայմանավորում է նրանց կախումը Ռուսաստանից եւ շեշտը դնել թեթեւ ու սննդի արդյունաբերության զարգացման, նոր տեխնոլոգիաների ներդրման վրա»: Եթե Հայաստանի կառավարությունը պատշաճի տնտեսության այդ ուղղվածությունը, ապա Կոմկուսը կտրականապես դեմ կլինի, հայտարարեց Բաղդասյանը:

Խոսելով ներկայիս խորհրդարանի մթնոլորտի մասին, Բաղդասյանը նշեց լուրջ տրամադրված պատգամավորների որոշակի մասի առկայությունը: «Դրանք լրիվ նոր մարդիկ են, գրագետ, որոնք դժվար թե ժամանակ մեռցնեն բուֆետում կամ էլ ֆնեն: Նրանք խորհրդարան են մտել ոչ միայն պատգամավորական անձեռնմխելիության համար, դա նրանց համար բաց պարզունակ է: Այդ առումով, կարծում եմ, աշխատանքը կառուցողական կլինի: Իսկ այսպես կոչված «ճահիճը» կոդաշտանի այն օրենքները, որոնք նրա համար «հովանի» կապահովեն եւ արտոնյալ հարկային քաղաքականություն», ասաց ՀԿԿ ղեկավարը:

Կոմկուսի հնարավոր ընդդիմությունը խորհրդարանում Բաղդասյանը պայմանավորեց «Միասնության» եւ նրա ձեւավորած կառավարության քաղաքական կուրսով: «Մեր դերը որպես արմատական ընդդիմություն կառուցողականության մեջ է: Ես միշտ էլ կողմ եմ նրան, որ նորմալ խորհրդարան լինի, որում ընդդիմությունը ինքնանպատակ չէ: Լինել ընդդիմության մեջ հանուն ընդդիմության Կոմկուսի ոճը չէ: Բայց եթե ընդունվող օրենքները չեն համընկնում մեր տեսանկյունին, ապա մենք, բնականաբար, դեմ ենք», ասաց Բաղդասյանը:

digitised by A.R.A.R.@

ԱԶԳ

Զրույցի ամկյուն

- Ի՞նչ է եղել... (Լ. Տ. Պ)
- Բան էլ չի եղել, երկիրն է խանդվել ... (Պ. Զ.)

Լոս Անջելեսում հրատարակվող «Ասպարեզ» օրաթերթում մարտի 27-ին լույս տեսած այս հոդվածը վաղուց էր մեր տրամադրության տակ: Խորհրդարանական ընտրությունները պատճառ դարձան հոդվածի ուշ (ոչ ուշացած) հրապարակմանը մեր թերթում:

Այբուբենային ճշմարտություն է, թեեւ ոչ հաճախ կիրառվող, որ հարցազրույց վարելիս լրագրողը պետք է այնպիսի հարցեր տա, որ զրուցակիցը «ծուղակն» ընկնի եւ, անկախ իր կամքից, բացահայտի իրեն, այսինքն՝ զրույցի ընթացքում ինչի ոչ միայն նրա ասելիքը, այլեւ երեւա նրա մարդկային կերպարը: Այս իմաստով միանգամայն գովեստի են արժանի «Առավոտ» եւ «Ազգ» թերթերի թղթակիցները, որոնք կարողացել են նախկին «ազգընտիր» Լեւոն Տեր-Պետրոսյանին այնպես խոսեցնել, որ պատասխանների եւ հարցերի կենդանի մարդը՝ իր ամբողջ էությամբ: Թեեւ գովեստը հասցեագրել միայն լրագրողներին այնքան էլ արդարացի չէ, քանի որ Լ. Տ. Պ-ը միշտ էլ սիրահոժար ինքնաներկայացմամբ է զբաղվել եւ «շատ-ել» է իր ինքնանկարը գծել յուրաքանչյուր ելույթի ժամանակ: Չի փորձել թաքնվել, որովհետեւ իր երբեմնի անհասանելի բարձունքից բանի տեղ չի դրել Հայաստան կոչվող երկրի քաղաքացիներին, ուստի մտքովն իսկ չի անցել «ռետուշով» ներկայանալ իր հպատակներին: Դա ինքնահավան, իր համախոհների հանդեպ առանձնապես սեր չտածող, անհիմն ինքնավստահությամբ լեփ-լեցուն մարդու կերպարն է, որը գուցե գեղարվեստական գրականության համար շահեկան է որպես մարդկային տեսակի ուսումնասիրման նյութ, բայց ոչ երբեմ երկրի ղեկավարի համար:

Փակագիծ: Ես հասկանում եմ, որ ոմանց մոտ կարող է հարց առաջանալ, թե ինչու եմ անընդհատ գրում Լ. Տ. Պ-ի մասին, մի՞թե ուրիշ «արժանի» մարդիկ չկան: Կան, կան, այն էլ որքա՜ն շատ, բայց ես խնայում եմ իմ ժամանակը, որը նախընտրում եմ իմ հիմնական գործին գրականությանն ու թատրոնին ծառայեցնել եւ ժամավաճառ չլինել խմբանկարի բոլոր անդամների մասին առանձին-առանձին գրելով: Դրա համար էլ ընտրել եմ բուրգի գագաթին կանգնած մարդուն, որն իր ձեռքերով, իր պատկերի նմանությամբ էր կազմել բուրգը, իր «թիմի» կենտրոնական դեմքն էր, եւ ուրեմն, գլխավոր պատասխանատուն:

Մի քանի օրինակ «կերպարի» վերաբերյալ: Ո՞վ է լսել, լսե՞լ եք երբեւիցե, որ հարցերին պատասխանողը հարց տվող լրագրողին ագրեսիվորեն ասի. «Ես վստահ եմ, որ դուք ձեզ ավելի գիտակից եք համարում, քան ինձ»... Կամ այսպես կողմնորոշեն հարցակվի. «Ես հիմա ազատ մարդ եմ եւ օգտվում եմ բոլոր այն իրավունքներից, որոնցից անգամ (՞) դուք չեք օգտվում, քանի դեռ ազատ չեք (՞)»... Կամ՝ «Չեմ բացառում այն հնարավորությունը, որ դուք էլ ինչ-որ հանցանք կատարել եք»:

Տվեք որեւէ երկրի որեւէ նախկին նախագահի անուն, որ այսքան վերեւներից է նայել լրագրողի վրա, այսքան քամահրանքով խոսել հետը, այսքան ծաղրով ու իր անհասանելի բարձրության անվերջ ընդգծումով: Եվ այսքանից հետո առնվազն տարօրինակ է հնչում նախկինի կարծիքը սեփական անձի մասին, թե «ես այնքան մեծամիտ մարդ չեմ»: Իսկ մի քանի տող ներքեւ, պնդելով, թե իր որդին «Ամերիկայում երբեք չի եղել», բնավ անհարմար չի զգում լրագրողի բերած այն փաստից, թե՝ «Ես նրա նկարը տեսել եմ «Կալիֆոռնիա կուրիեր» թերթում: «Նա այցելել է իմ ազգականին 15 օրով», լինում է պատասխանը, որից հետո թատերագիրը փակագծի մեջ անպայման ռեմարկ կգրեր՝ «առանց թեկուզ փոքր-ինչ կարմրելու»: Վերոնշված բարձունքներից խոսողն իրավունք ունի՞ նման մանր կեղծիքների դիմելու, հարա՞ ո՞ւր եւ ուր կանգնի կենդանի մարդը՝ իր ամբողջ էությամբ: Թեեւ գովեստը հասցեագրել միայն լրագրողներին այնքան էլ արդարացի չէ, քանի որ Լ. Տ. Պ-ը միշտ սիրահոժար ինքնաներկայացմամբ է զբաղվել եւ «շատ-ել» է իր ինքնանկարը գծել յուրաքանչյուր ելույթի ժամանակ: Չի փորձել թաքնվել, որովհետեւ իր երբեմնի անհասանելի բարձունքից բանի տեղ չի դրել Հայաստան կոչվող երկրի քաղաքացիներին, ուստի մտքովն իսկ չի անցել «ռետուշով» ներկայանալ իր հպատակներին: Դա ինքնահավան, իր համախոհների հանդեպ առանձնապես սեր չտածող, անհիմն ինքնավստահությամբ լեփ-լեցուն մարդու կերպարն է, որը գուցե գեղարվեստական գրականության համար շահեկան է որպես մարդկային տեսակի ուսումնասիրման նյութ, բայց ոչ երբեմ երկրի ղեկավարի համար:

Փակագիծ: Ես հասկանում եմ, որ ոմանց մոտ կարող է հարց առաջանալ, թե ինչու եմ անընդհատ գրում Լ. Տ. Պ-ի մասին, մի՞թե ուրիշ «արժանի» մարդիկ չկան: Կան, կան, այն էլ որքա՜ն շատ, բայց ես խնայում եմ իմ ժամանակը, որը նախընտրում եմ իմ հիմնական գործին գրականությանն ու թատրոնին ծառայեցնել եւ ժամավաճառ չլինել խմբանկարի բոլոր անդամների մասին առանձին-առանձին գրելով: Դրա համար էլ ընտրել եմ բուրգի գագաթին կանգնած մարդուն, որն իր ձեռքերով, իր պատկերի նմանությամբ էր կազմել բուրգը, իր «թիմի» կենտրոնական դեմքն էր, եւ ուրեմն, գլխավոր պատասխանատուն:

Մի քանի օրինակ «կերպարի» վերաբերյալ: Ո՞վ է լսել, լսե՞լ եք երբեւիցե, որ հարցերին պատասխանողը հարց տվող լրագրողին ագրեսիվորեն ասի. «Ես վստահ եմ, որ դուք ձեզ ավելի գիտակից եք համարում, քան ինձ»... Կամ այսպես կողմնորոշեն հարցակվի. «Ես հիմա ազատ մարդ եմ եւ օգտվում եմ բոլոր այն իրավունքներից, որոնցից անգամ (՞) դուք չեք օգտվում, քանի դեռ ազատ չեք (՞)»... Կամ՝ «Չեմ բացառում այն հնարավորությունը, որ դուք էլ ինչ-որ հանցանք կատարել եք»:

Տվեք որեւէ երկրի որեւէ նախկին նախագահի անուն, որ այսքան վերեւներից է նայել լրագրողի վրա, այսքան քամահրանքով խոսել հետը, այսքան ծաղրով ու իր անհասանելի բարձրության անվերջ ընդգծումով: Եվ այսքանից հետո առնվազն տարօրինակ է հնչում նախկինի կարծիքը սեփական անձի մասին, թե «ես այնքան մեծամիտ մարդ չեմ»: Իսկ մի քանի տող ներքեւ, պնդելով, թե իր որդին «Ամերիկայում երբեք չի եղել», բնավ անհարմար չի զգում լրագրողի բերած այն փաստից, թե՝ «Ես նրա նկարը տեսել եմ «Կալիֆոռնիա կուրիեր» թերթում: «Նա այցելել է իմ ազգականին 15 օրով», լինում է պատասխանը, որից հետո թատերագիրը փակագծի մեջ անպայման ռեմարկ կգրեր՝ «առանց թեկուզ փոքր-ինչ կարմրելու»: Վերոնշված բարձունքներից խոսողն իրավունք ունի՞ նման մանր կեղծիքների դիմելու, հարա՞ ո՞ւր

մնաց ամոթի միջից իր խոսքով մեզ երջանկացնող մարդու «հպարտ» կեցվածքը: Ի՞նչ եղավ, մի վայրկյանում կենցաղային մի սոսկ պայթե՞ց փուչիկի պես: Եվ ինչո՞ւ, ինչո՞ւ, ի՞նչ կարիք ուներ...

Բայց այս ամենն, ինչպես ասում են, ճաշակի, ուստի թողնենք «ազգընտիր»-ի «կերպարը» եւ տեսնենք, թե այդ կերպարն ինչ է ասում ըստ էության:

Պարզ չէ՞, որ նախ պետք է խոսի իր մտքական եւ անդավաճան սիրո Դաշնակցության մասին: «Եթե ՀՀՇ-ն չմնա, ո՞վ է մնալու... Ո՞րն է ՀՀՇ-ից լավը» առանց մեղանչման որեւէ փորձի, անվարան ասում է նախկին «ազգընտիրը»: Իմ նախորդ հոդվածներից մեկում ես փորձել եմ ապացուցել, որ Հայոց համազգային շարժման մեջ այսօր ոչինչ չկա հայկական, ոչինչ չկա համազգային եւ չկա նույնիսկ շարժում, ուրեմն՝ չկրկնեմ իզուր: Բայց, ի հակադրություն այդ գովերգության, «ազգընտիր»-ի հաջորդ խոսքը Դաշնակցության մասին է, որը «եղել է՝ տեսել ենք, եղել-գնացել է, հիմա ես է եկել, էլի կգնա, ի՞նչ է եղել»: Իմիջիայլոց, չնայած հալածանքներին, Դաշնակցությունը չի «գնացել» ոչ համիդյան, ոչ իթթիհատական Թուրքիայում, ոչ ցարական Ռուսաստանում, այլ միայն Սովետական Միությունում եւ Լ.Տ. Պ-ի «ղեկավարած» ազատ-անկախում, մի բան, որ ինքնին խոսուն փաստ է եւ բնավ մեկնաբանության կարիք չի զգում: Դարձյալ իմիջիայլոց հիշեցնեմ, որ երբ հարց էր բարձրացվել 20-րդ դարի մեծագույն մարդկանցից մեկին Սախարովին, սովետական ակադեմիայից վտարելու մասին, եւ ակադեմիկոսները վախից կարկամել էին, նրանցից միայն մեկը համարձակություն է ունեցել հիշեցնելու, որ նման նախադեպ եղել է միայն մի անգամ ֆաշիստական Գերմանիայում, որից հետո կոմունիստներն անգամ ամաչել են եւ մեկընդմիշտ փակել հարցը...

Պարզվում է, որ Դաշնակցությունը Լ. Տ. Պ-ը չի փակել, այլ... դասարանը: Ո՞ր դասարանը, խամաճիկ երրորդ «իշխանությո՞ւնը», որ պար էր գալիս իր տերերի դուդուկի տակ: Ո՞վ չգիտի, որ դասարանն անում էր այն, ինչ նախագահն էր որոշում: Իսկ ինչո՞ւ էր արգելվել Դաշնակցությունը, ո՞ր մեղքի համար: «Որովհետեւ ես դրանով կանխեցի տեռորը»: Ու նախկին «ազգընտիրը» պահանջում է լրագրողից «Դուք պետք է արձանագրեք դա»: Ես էլ եմ կասարում նրա պահանջը, արձանագրում եմ դա, բայց եւ անմիջապես հիշեցնում, որ բուն տեռորիստը իշխանությունն էր, որն ընտրել էր պետական տեռորի սկզբունքը, անցանկալի մարդկանց անօրինաբար ձերբակալելով ու փտեցնելով բանտերում, սեփական ժողովրդի դեմ զորք եւ տանկեր հանելով, բազմիցս կեղծելով ընտրությունների արդյունքները, երկիրը լցնելով գանձագողերով... Եվ այսքանից հետո դեռ համարձակվում է պնդել, թե «...մինչեւ 98 թվականը Հայաստանում տեռորիստական որեւէ ակտ տեղի չի ունեցել»: Եվ դեռ հանդգնում է ասել, որ «դուք դրա համար ինձ պետք է շնորհակալություն հայտնեք»: Շնորհակալ ենք, իհարկե, շնորհակալ ենք, Հայաստանը հայաթափելու, մեկ միլիոնից ավելի հայերի երկրից դուրս քշելու, արհեստականորեն կազմակերպված խավարից տարիներով կուրանալու, ժողովրդին նվաստացնելու եւ սոռացնելու համար, երկնից մինչեւ գետին շնորհակալ ենք: Իսկ ինչո՞ւ դաշնակցական տեռորի կողմին այլեւս չի հիշատակվում դաշնակցական թմբիբզեսը, գուցե արդեն շա՞տ ծիծաղելի, ավելի ճիշտ՝ վայրենի՞ է հնչում այս ամբաստանությունը, գուցե ամաչո՞ւմ է՝ արդեն 108 տարի «գնացող-եկող» մի ամբողջ կուսակցությանը վերագրվող այս անհեթեթությունից:

Բայց Դաշնակցությունը թող ծեռը դնի խղճին եւ խոստովանի, որ Լ. Տ. Պ-ը շատ բան արեց կուսակցության հեղինակությունն ակամա բարձրացնելու համար: Ո՞վ չգիտի, որ ժարվեց նախկինի պարտվողական քաղաքականությունից եւ դարձյալ տեր կանգնեց իր հայրենի երկրամասին: Ի՞նչ է, գուցե ապացուցե՞լ է պետք, թե սրանք տրամագծորեն հակադիր վիճակներ են, մեկը՝ երիտ-հայկական, մյուսը՝ պարզապես հայկական: Թե՞ ապացուցել է պետք, որ լիսաբոնյան որոշումը եւ Եվրոպառլամենտի վերջին բանաձեւը սար ու ծորի տարբերություն ունեն, մեկը՝ Լ. Տ. Պ-ի օրոք, մյուսն՝ առանց Լ. Տ. Պ-ի:

Սա չի՞ «ես գիտեի լուծման ճանապարհը, եւ լուծում էի» Լ. Տ. Պ-ական ինքնավստահության բուն պատկերը...

«Ազգընտիրի» բախտը չբերեց, չէ, չբերեց այս անգամ, որովհետեւ այս հարցազրույցը հակառակի պես համընկավ նրա երբեմնի գլխավոր խորհրդական, ամենագլխավոր ծայնափող, «Սեւ կարդինալ» Ժիրայր Լիպարիտյանին Բաքու հրավիրելու ցնցող տեղեկատվության հետ: Եվ ամեն ինչ տեղն ընկավ: Ո՞ւմ են թուրքերը սովորաբար հրավիրում իրենց մայրաքաղաքը եւ ինչո՞ւ, հը՞, ի՞նչ ես կարծում, ընթերցող, հարկ չկա երկար-բարակ մտածելու, պատասխանը չի կարող անմիջապես չհետեւել այս հասարակ հարցին: Էլ ի՞նչ փաստ ես ուզում, էլ ի՞նչ ապացույց, որ տարիներ շարունակ երիտ-հայերի այս խումբը զբաղվել է նախ ազգային, հետո հակաազգային գործունեությամբ, եւ ահա այդ քաղաքականության բարձրագույն պարգեւը՝ Բաքվի հրավերը, որը նույն է, թե Լ. Տ. Պ-ին հրավիրեին, նույնն է, նույնը...

Քավ լիցի, ես չեմ պնդում, թե Լ. Տ. Պ-ը կամ նրա ամենագլխավոր խորհրդականը դավաճաններ են, այսինքն՝ գիտակցորեն ուզում են վնասել մեր հայրենիքին: Բայց սա հարցի սուբյեկտիվ կողմն է: Իսկ օբյեկտիվորեն, իրենց վնասակար գործունեությամբ եւ վնասաբեր մտայնությամբ, նրանց առջեւ անխուսափելիորեն կանգնում է Վասակ Սյունեցու չարագուշակ ուրվականը: Ոչ ավանդական իմաստով: Չէ՞ որ Վասակն էլ այնքան միանշանակ դեմք չէ հայոց պատմության մեջ: Թեեւ դա քող ոչ ոքի չմտիքարի...

Վստահ եմ, որ պարոն գլխավոր խորհրդական Ժիրայր Լիպարիտյանը Բաքվում նույնքան օգտակար խորհուրդներ տվեց Հեյդար Ալիեւին, որքան տալիս էր Լ. Տ. Պ-ին:

«Ի՞նչ է եղել», հարցազրույցում երկու թե երեք անգամ հարց է տալիս նախկին «ազգընտիրը»: Իսկ ի՞նչ պետք է լինի: Եղել է ընդամենն այն, որ Լ. Տ. Պ-ի տեռորիստական իշխանության Ավգյան ախոռները հնարավոր չէ կարճ ժամանակում մաքրել, եւ հիմա մեր նոր իշխանությունը փորձում է, թեեւ ոչ թե թեւերը քշած, այլ կիսաս-պռաս ուժերով, մաքրել դրանք ու մեր ծիրանային հանրապետությունը (ի՞նչ բանանային, խե՞նթ եք, ի՞նչ եք, բանանը թանկ է Հայաստանում) գոնե մեկ ոտի վրա կանգնեցնել, որպեսզի թեկուզ կաղեկաղ քայլի, այո, թեկուզ կաղեկաղ...

Հարցազրույցում ինձ ուրախացրեց ընդամենը մի տող, որից անկեղծության հոտ առա, տեսա կեցվածքից ու բարդույթներից զոնե մի պահ ձերբազատված մարդու, տեսա այն Լեւոն Հակոբի Տեր-Պետրոսյանին, որին այդպես իմացավ ու այդպես ճանաչեց ժողովուրդը տասը տարի առաջ, իսկ հետո կորցրեց հուր-հավիտյան: Հաճույքով եւ լրիվ ընթերցումով բերում եմ այդ զուտ մարդկային տողը. «Հիմա իմ թոռն է իմ ընկերը»: Թող երկինքը վկայի, մաքուր սրտով եմ մաղթում, որ Աստված առողջ ու երջանիկ կյանք պարգեւի նրա թոռանը: Նաեւ՝ բոլորիս թոռներին...

ՊԵՐԴ ԶԵՅԹՈՒՆՑՅԱՆ

digitised by A.R.A.R.@

ՖՐԱՆՍԻԱ

Պերճ Զեյթունցյանի «Վերջին արեւագալը» ֆրանսերեն

Ֆրանսիայի Շամինյի հաղորդի «Սերել դ'էրի կոկազիեն» հրատարակչությունը Հրաչ Պետրոսյանի թարգմանությամբ լույս ընծայեց Պերճ Զեյթունցյանի «Վերջին արեւագալը» վեպի առաջին մասը (վեպը երեւանի «Արեւիկ» հրատարակչությունում լույս է տեսել 1990 թ.): 400 էջանոց այս հատորի առաջաբանի հեղինակը գրքի թարգմանիչն է: Նա մասնավորապես նշում է, որ Զեյթունցյանի վեպը պատմագիտական աշխատություններից տարբերվում է կենսագրական բնույթով, ուստի հասցեագրված է ընթերցողների ավելի լայն շրջանակի: Վեպի առաջին հատորում Օսմանյան կայսրության եւ Արեւելահայաստանի 1885-1915 թթ. իրադարձություններն են, կենտրոնական դեմքը հայտնի գրող, հրապարակախոս, փաստաբան, 1908-1915 թթ. օսմանյան խորհրդարանի պատգամավոր Գրիգոր Զոհրապն է: Փաստերով հակահարված տալով բնաջնջված հայերի թիվը եւ ցեղասպանության կանխամտածված բնույթը վիճարկող անձանց, առաջաբանի հեղինակն իր հերթին հարց է տալիս. մի՞թե



հնարավոր կլիներ չկանխամտածված ծեւով 2-3 օրում ոչնչացնել արեւմտահայ մտավորականության եւ հոգեւորականության սերունդը: Իսկ ինչո՞վ բացատրել թուրքական բանակ զորակոչված տուրք 60 հազար հայերի զինաթափումն ու կոտորածը: Սուլթան Աբդուլ Համիդ Բ-ն 1876 թվականից հալածանքների եւ ջարդերի հաղորդավարությունն էր վարում Օսմանյան կայսրության ասիական տիրույթներում՝ ֆեդով բարեփոխումներ պահանջող հիսունյա եւ մահմեդական ժողովուրդներին: Պայքարի առաջին գծում Փոքր Ասիայի հնագույն բնիկ ժողովուրդ հայերն էին: Երիտթուրք գործիչները 1908 թ. իշխանությանը տիրելուց առաջ եւ դրանից հետո խոստումներով բթացրին հայերի զգոնությունը: 1909 թ. սուլթանին տապալելուց հետո նրանք դեն նետեցին ազատականի դիմակը. նրանց առաջին մեծ ոճիրը Ադանայի ջարդն էր: Կայզերական Գերմանիայի աջակցությունից օգտվելով՝ Թուրքիան մասնակից դարձավ Առաջին աշխարհամարտին, որի ընթացքում երիտթուրքերն իրենց դաշնակից գերմանացիների այրի առաջ իրականացրին 1,5 մլն հայերի ցեղասպանությունը:

Զեյթունցյանի վեպը միաժամանակ պատմական է եւ կենսագրական: Պատմական իրադարձությունների հորձանուտում, երիտթուրք ղեկավարների, եվրոպացի եւ ամերիկացի դիվանագետների գործունեությանը զուգահեռ պատկերված են հայ մտավորականների, բանաստեղծների, գրողների (մասնավորապես Գրիգոր Զոհրապի) կյանքը եւ հայ ժողովրդի գողգոթայի վերջին փուլերը:

Ֆրանսիական նույն հրատարակչությունն այս տարի լույս կընծայի վեպի երկրորդ՝ վերջին մասը, ինչպես նաեւ Միխայել Շաթիրյանի «Արծաթե դարը», Հովհաննես Դուկասյանի «Ոսկեայ երեւանցին», Վալենտին Պիկուլի «Բայազետը»:

ՊԵՏՐՈՍ ՔԵՇԻՇՅԱՆ

ԱԶԳ

Միջազգային

ԱՄԵՐԻԿՅԱՆ ՄԱՄՈՒԼ

Մեսալ հաշվարկված պատերազմն ու նրա հետեւանքները ըստ Քիսինջերի

Մակեդոնիայի Կումանովո բնակավայրում ՆԱՏՕ-ի եւ Հարավսլավիայի ներկայացուցիչների ստորագրած ռազմատեխնիկական համաձայնագիրը թեեւ ապահովել է անհրաժեշտ զինադադարը, սակայն դեռ երկար ժամանակ կպահանջվի, որ վերերն սպիանան: Պատերազմը, որը շատերի կարծիքով, ճիշտ հաշվարկված չէր, մեծ վնաս հասցրեց ինչպես Չինաստանի եւ Ռուսաստանի հետ Միացյալ Նահանգների հարաբերություններին, այնպես էլ ՆԱՏՕ-ի հեղինակությանը: Այս մասին հետաքրքիր դիտարկումներ է անում ԱՄՆ-ի նախկին պետքարտուղար եւ այնուհետեւ ազգային անվտանգության գծով հատուկ խորհրդական Հենրի Քիսինջերը «Նյուզուիք» հանդեսի մայիսի 31-ի համարում զետեղված «Նոր աշխարհակարգ» «Նոր աշխարհակարգ» արտահայտության փոխարեն ( ) խորագրով իր հոդվածում:

Բալկանների հեռավոր ծայրում մղվող պատերազմի քաղաքական հետեւանքները զգացվում են Կոսովոյից շատ հեռու, գրում է նա եւ շարունակում, որ ՆԱՏՕ-ի գործողություններից Ռուսաստանում նվաստացումի մոլեգին զգացումը վերնախավից փոխանցվել է նաեւ լայն հասարակությանը եւ սպառնում է խորտակել Ս. Նահանգներ-Ռուսաստան հարաբերությունները: Բելգրադի չինական դեսպանատան ռմբակոծության բունոտ հակազդեցությունը սեղ է խրում ամերիկա-չինական հարաբերությունների սերտացման մեջ: Իսկ եվրոպայում Ալանդյան դաշինքի հանդեպ ցուցաբերված թվացյալ միասնությունը չափազանց դյուրաբեկ է դարձել: Գլխավոր թե Ռուսաստանը ՆԱՏՕ-ի ընդարձակումից վախ չպետք է ունենա:

Կոսովոն դարձավ Ռուսաստանի հետսառըպատերազմյան մտավախությունների խորհրդանիշը: Մոսկվայի ավանդական բարեկամ Հարավսլավիայի դժբախտությունն էլ ավելի սրեց Ռուսաստանի անկումային վիճակը, եւ ընդհանուր բշնամանք առաջացրեց մասնավորապես Ամերիկայի եւ ընդհանրապես Արեւմուտքի նկատմամբ: Սա վատ վերջաբան էր մեր վարչակարգի համար, որը հետաքրքրում էր Ռուսաստանին սիրաշահելու եւ այնտեղ կատարվող բարեփոխումներին նեցուկ կանգնելու քաղաքականություն: Ահա թե ինչու Ռուսաստանի միջնորդական առաքելության հետ



դաշնակիցների երկրներում ՆԱՏՕ-ի գործողություններին ընդդիմանալուն առընթեր, Կենտրոնական եվրոպայի ՆԱՏՕ-ի նորանդամ երկրներում առաջացած անհանգստությունն այն է, որ իրենց առաջին քայլն այդ դաշինքում պատերազմական գործողություններին մասնակից դառնալն է:

Սերունդների միջեւ եղած տարբերությունն էլ ավելի է սրում կացությունը, գրում է նա: Քլինթոնի վարչակարգի գլխավոր անդամներն իրենց փորձառությունը հիմնականում ձեռք են բերել կամ հակավիետնամական շարժման, կամ էլ նախագահական արշավների ընթացքում: Արտաքին քաղաքականությունում իշխանության դերի հանդեպ ունեցած իրենց կասկածներն ստիպում են նրանց գործել առանց համոզմունքների, անարդյունավետ: Նրանք շատ ավելի շատ դնում են այսպես կոչված «փափուկ» (ինչպես օրինակ, շրջակա միջավայրի) խնդիրների լուծման վրա՝ նվազ ուշադրություն դարձնելով միջազգային հավասարակշռությանը կամ Ս. Նահանգների ավանդական շահերին, որոնք, ըստ նրանց, հնացած հասկացություններ են: Հասարակական կարծիքների վրա չափից ավելի հենվելով, նրանք հակված են արտաքին քաղաքականությունը դիտել որպես ներքինի շարունակություն: Նրանք հմուտ դիվանագետներ են կարճատեւ տակտիկական հարցերում, բայց չափազանց տհաս ռազմավարական հարցերում: Եվ հենց սրանով էլ բացատրվում է, թե ինչպես խրվեցին կոսովյան ճգնաժամի մեջ՝ առանց հնարավոր բոլոր հետեւանքները հաշվարկելու: Նախքան ռմբակոծությունները Վաշինգտոնում հավատացած էին, թե Սերբիայի պատմական կաղվածությունը Կոսովոյին չափազանցված է, եւ որ Միլոշեւիչը պատրաստ է փնտրում ազատվելու այդ մղձավանջից: Մի քանի օրվա ռմբակոծությունը նրան այդ հնարավորությունն ընձեռելու էր: Բայց ի՞նչ էր լինելու, եթե Սերբիան (որն անցյալում թուրքական եւ ավստրիական կայսրությունների դեմ էր կռվել եւ հանդգնել Հիտլերին եւ Ստալինին դեմ դուրս գալ) տեղի չտար: Թե ինչո՞ւ պետք է առաջ գնային, սկզբից եւեթ հասասված է առաջ գնային, սկզբից եւեթ հասասված է առաջ գնային, սկզբից եւեթ հասասված

ԱԶԳ

Մշակույթ

Վերադարձ ինքնասպանությունից հետո

Տեմինգուեյի մահից անցել է 38 տարի, սակայն նա շարունակում է մնալ 20-րդ դարի ամենաակնառու ամերիկյան գրողը, եւ մարդկանց շարունակ հետաքրքրում են նրա կյանքի նոր մանրամասներ: Նա ապրեց ավելի երկար, քան նրա հազարավոր հետեւորդներն ու բազմաթիվ ընթերցողները: Այսօր նրա գործերը մեծ չափով տպվում ու վերատպվում են: Իսկ հուլիսի 21-ին, երբ կլրանա նրա 100-ամյակը, Սիրայբներ հրատարակիչը խոստացել է լույս ընծայել նրա վերջին մեծածավալ անավարտ ծեռագիրը, որի իրադարձությունները տեղի են ունենում 1953 թ. Աֆրիկայում եւ իրականության չափազանցված վերարտադրությունն են: Գործը խմբագրել է Հեմինգուեյի միջնեկ որդին՝ 70-ամյա Պատրիկը եւ վերնագրել Հեմինգուեյի ոճով՝ «Առաջին հայացքից ծմարիտ»: Մինչեւ այժմ էլ երկրպագուները կասկածում են՝ արժե՞ր տպագրել «Տոն, որ միշտ քեզ հետ է» գիրքը, որը Հեմինգուեյը չէր վերջացրել եւ վերնագրել էր «Աչքն ու ականջը», իսկ նրանց ամենախիստ մասը դա համարում է նրա չորրորդ եւ վերջին կնոջ՝ Մերիի արածից էլ մեծ դավաճանություն, որը հայտնել էր, թե իրենց անկողնային սիրախաղերում Հեմինգուեյը հաճախ գերադասում էր կին լինել: Մենք ավելի սովոր ենք նրան համառ ու դաժան պատկերացնել, այնպես չէ՞: Սակայն մի անգամ Հեմինգուեյն ինքը լույս է սփռել հարցի այս կողմի վրա, երբ Սոթ Ֆիցջերալդի «Վերջին մագնատը» գործի հետմահու տպագրության առթիվ գրել է իրենց ընդհանուր խմբագրին՝ Մաքս Պերկինսին. «Գուցե ճիշտ չէ՞ Սոթի անավարտ գործը հրատարակելը, սակայն կարծում եմ որդերն այնքան էլ չեն ընդդիմանա»:

Հեմինգուեյի 100-ամյակի առթիվ առաջին մասնագիտական սիմպոզիումը տեղի կունենա Բոստոնի Ջոն Ֆ. Քենեդիի անվան գրադարանում, ուր եւ պահվում է նրա ծեռագրերի ու նամակների մեծ մասը: Սիմպոզիումին կմասնակցեն նրա երեք որդիները՝ Ջանը, Պատրիկն ու Գրեգորին: Հուլիսին Քեյ Ուեսթում կանցկացվեն Հեմինգուեյի նմանակի ընտրությունները, որի հաղթողը հնարավորություն կստանա հանդիպելու Պատրիկին եւ մասնակցելու տոնական ճաշկերույթների մի քանի ռեստորաններում: Սակայն ամենակարեւոր իրադարձությունը կանցկացվի Հեմինգուեյի հայրենի քաղաքում՝ Օուք Փարքում: Ութ օր անընդմեջ կցուցադրվեն ֆիլմեր, կանցկացվեն շրջագայություններ, ցուցահանդեսներ, ելնարկումներ, պարեր, ի վերջո, առաջին անգամ Օուք Փարքի փողոցներում կվազեն ցուլերը:

Տոնակատարություններից հետո լույս կտեսնի գիրքը: Պատրիկը կրճատել է ծեռագրի մոտ 1/3-ը, սակայն այնտեղ իսկապես զվարճալի պատմություններ կան, իսկ ամենակարեւորը՝ առյուծի որս եւ սիրային եռանկյունի. գրող, որի անունը էռնեստ Հեմինգուեյ է, նրա կին Մերին եւ մի «անգլույշ» երիտասարդ կին՝ Դեբան: Իրական է եւ Մերիի որսած առյուծը, որի մորթին այժմ գտնվում է Քենեդիի գրադարանում, ճիշտ է, հազիվ թե հիշեցնի հելիոպային հրեշին, որին նկարագրել է Հեմինգուեյը «հսկայական, մութ» գլխով եւ «ծանր ու խոշոր» մարմնով: Իրական է եւ Դեբան, սակայն ռոմանտիկ արկածը, ամենայն հավանականությամբ, հորինված է: Իսկ Պատրիկը, որը երկար տարիներ Աֆրիկայում սաֆարիի ուղեկցող է եղել, ասում է՝ «Աֆրիկայի գիտակի նրա վարկը անսահմանորեն չափազանցված է: Ճիշտ է, հետաքրքիր է կարդալ նրա գործերը, բայց երբ սեփական փորձով ես տեղեկանում, թե ինչ է նշանակում առյուծ որսալ... Ասված իմ»:

Գրքի 800 տարօրինակ էջերը Հեմինգուեյը գրել է 1955-56 թթ. ընդհատելով «Ծերունին ու ծովը» ֆիլմի էկրանավորմանը մասնակցելու համար: 1971-72 թվերին գրքի 1/4-ը հրատարակեց «Սփոթս իլյուստրեյթեդը», սակայն զարմանալիորեն աննկատ մնաց: Գրքի վերադարձը, թվում է, դառնալու է 1999-ի ամենախոշոր գրական իրադարձությունը: Այնտեղ կան արկածներ, որս, սեր ու թեկուզ անավարտ, բայց եւ զարմանահրաշ, անհանգիստ, գրավիչ ու օվկիանոսային մի աշխարհ, ուր գրեթե անշոշափելի են սեւի ու սպիտակի, կնոջ ու տղամարդու, փասի ու երեւակայության միջեւ գտնվող սահմանները: 1940-ին գրված «Ո՞ւմ մահն է գուժում զանգը» եւ 1961 թ.-ի միջեւ ընկած երկու տասնամյակում Հեմինգուեյը ընդամենը 2 փոքրիկ գիրք հրատարակեց՝ «Գետի երկայնքով դեպի ծառերը» եւ «Ծերունին ու ծովը»: Սակայն նա գրում էր հազարավոր էջեր, որոնք կարծես անկարող էր ավարտել եւ որոնք չէին հասնում ընթերցողին: «Ծերունին ու ծովը» գրեթե 2000 էջանոց գործի փոքր հատվածն էր: Դրա մի մասը 1970-ին տպագրվեց «Կղզիները փոթորկի մեջ» վերնագրով: Նա ծեռնարկել էր եւս մի վեպ՝ «Եդեմական այգին», որի անպատճույճ, կրքոտ ու վախեցնող իրադարձությունները պտտվում էին մի տարօրինակ սիրային զույգի շուրջը: Այդ խառնաշփոթի խմբագրված տարբերակը լույս տեսավ 1980-ին:

Ի՞նչ էր պատահել Հեմինգուեյին: Նա տրվել էր հարբեցողության, գիրանում էր, մի քանի անգամ լուրջ վիրավորել էր գլուխը, տրամադրությունը կարելի էր բնորոշել որպես «անկումային»: Կնոջ վկայությամբ, որը նրա հետ էր վերջին օրերին, նա հոգեկան լուրջ խանգարումներ ուներ: Պատրիկը հանդգնված էր, որ նա պրում էր «սովորականից արագ ժամկարգով»:

Նոր գիրքը համեմատելով «Սփոթս իլյուստրեյթեդի» տպագրած տարբերակի հետ, կզգանք առաջինի ակնհայտ առավելությունները: Պատրիկը կրճատել է գրքի մի քանի հատվածներ, խուսափելով նկարագրել գրողի ու Մերիի հարաբերությունների լարվածությունը:

Հեմինգուեյն ինքն էլ շատ անգամ կրճատել է իր իսկ գործերը, սակայն կարո՞ղ է ուրիշ մեկը, թեկուզ նրա որդին, անել դա հեղինակից լավ: Եվ ընդհանրապես միտք ունի՞ տպագրել անավարտ գործը: Ասենք, երբ Սիրայբները հայտարարեց նոր գրքի լույսընծայման մասին, Ջոն Դիդիոնը «Նյու Յորքերում» մի ընթերցասական նյութ տպագրեց, հայտարարելով, որ հետմահու գրքի տպագրությունը զուտ շահադիտական նպատակներ է հետապնդում եւ խեղաթյուրում է Հեմինգուեյի գրական ժառանգությունը: Պատրիկն այլ կարծիքի է: Բացի գրքի տպագրությունից ստացված շահույթից (որը բաժանվելու է երեք եղբայրների միջեւ), նա որոշել է գործը հրատարակել, քանի որ սիրում է Աֆրիկան. «Ես չեմ ասում, թե սա նրա գլուխգործոցն է, պա՞րզ է: Ուղղակի այդ կյանքը ինձ համար վերջացած է, եւ ես երջանիկ եմ, որ հորս հաջողվել է անաղարտ պահպանել դրա մի փոքրիկ կտորը: Չգիտեմ ինչու Սիրայբները համաձայնել է լույս ընծայել գիրքը, վերջին հաշվով դա իր գործն է: Սակայն Աֆրիկայի նկատմամբ իմ հետաքրքրությունը գերազանցեց էռնեստ Հեմինգուեյին»:

Կարող է պարադոքսալ թվալ, որ օտարները Հեմինգուեյի մասին ավելի շատ են հոգում: Գուցե ճիշտ չէ կարդալ այն, ինչը գրողը չէր ցանկացել, որ մենք կարդանք: Սակայն չէ՞ որ նա գրում է, որ կարդան, ի վերջո, ի՞նչ կկորցնի մահացած մարդը:

Հյուսիսային Իլինոյսի համալսարանի պրոֆեսոր Ռոզմարի Բարվելը, որը խորապես ուսումնասիրել է ծեռագիրը, կարծիք է հայտնել, թե Հեմինգուեյը թաքցնում էր իր վերջին գործերը, չընդունելու եւ ուրիշներից էլ գաղտնի պահելու համար իր խոր դեպրեսիան, վախն ու անհանգստությունները: «Հակասական է հնչում, բայց հավատացեք, եթե նա կարողանար ավարտել «Եդեմական այգին», կապրեր», ասում է Բարվելը: Այս հարցում եւս Պատրիկը այլ կարծիքի է. «Չեմ կարծում, որ եթե նա մինչեւ 80 տարեկան ապրեր, կգրեր ավելին, քան արդեն գրել էր: Ամեն ինչ վաղուց ավարտվել էր, երբ նա ինքնասպան եղավ: Պետք է դատել այն ամենով, ինչ նա արել է: Միայն այսքանը»:

Քանի որ իրավական առումով հաղթանակը եղբայրների կողմն է, մենք էլ համաձայնենք: Իսկ Հեմինգուե՞յը: Նրանից պետք չէ որեւէ բան կրճատել...

«Նյուզուիք»-ի
Պատրաստեց
ՌՈՒԶԱՆ ԱԶԻԶՅԱՆԸ



ԵՐԵՎԱՆ

35 դասագրքերի հեղինակ վաստակավոր գիտնականը՝ Վաչագան Հովհաննիսյան

Խ. Աբովյանի անվան ՀՊՄՀ ինստիտուտի տարեգրությունը հարուստ է գիտության եւ կրթության գործի բազում երախտավորների անուններով: Ինստիտուտը հպարտությամբ կարող է հիշատակել նրանց անուն առ անուն եւ հավատալ, որ իսկապես բազում են կոչեցյալք, բայց սակավ են ընտրյալները: Այդ սակավ ընտրյալներից է Վաչագան Հովհաննիսյանը, որի 50-ամյա գիտա-մանկավարժական գործունեությունը շաղկապված է ինստիտուտի տարեգրությանը, որի աշխատանքը դարձել է ինստիտուտը պահող հենասյուներից մեկը:

70 տարիներ, որոնցից հիսունն անցել է աշխատանքի, գիտական հետազոտությունների, պրոցումների, ուսումնասիրությունների մեջ: Բացառիկներին է հաջողվում իրենց կյանքը եւ տարիներն ապրել այդչափ իմաստավորված:

Վ. Ա. Հովհաննիսյանը ծնվել է Ապարանի շրջանի Մուլքի գյուղում: 1954 թ.-ին գերազանց առաջադիմությամբ ավարտել է Խ. Աբովյանի ՀՊՄԻ-ի Ֆիզմաթ ֆակուլտետը: 1965 թ. պաշտպանել է թեկնածուական, իսկ 1985 թ. Լենինգրադի Ա. Ի. Գերցենի անվան մանկավարժական ինստիտուտին կից գիտական խորհրդում պաշտպանել է դոկտորական թեզ՝ ստանալով մանկավարժական գիտությունների դոկտորի գիտական աստիճան (մաթեմատիկայի դասավանդման մեթոդիկայի գծով): Առ այսօր նա հանրապետությունում նշված մասնագիտության գիտությունների միակ դոկտորն է: 1988 թ. Վ. Հովհաննիսյանին շնորհվել է պրոֆեսորի կոչում: 1998 թ. դեկտեմբերից նա Ռուսաստանի Դաշնության մանկավարժական կրթության միջազգային գիտական ակադեմիայի ակադեմիկոս է:

Տարբեր ժամանակներում Վ. Հովհաննիսյանը ինստիտուտում զբաղեցրել է զանազան պաշտոններ, այդ թվում նաեւ ինստիտուտի ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտորի պաշտոնը: Ինստիտուտում ինչ պաշտոն էլ որ զբաղեցրել է Վ. Ա. Հովհաննիսյանը, ինստիտուտի կյանքի մեջ ներմուծել է թարմություն, հրապարակայնություն եւ սկզբունքայնություն: Գիտական եւ աշխատանքային գործունեության ընթացքում նրա մեջ ձեւավորվել է ուժեղ, ամբողջական բնավորություն: Ինստիտուտի կոլեկտիվում Վ. Ա. Հովհաննիսյանի ունեցած դերի եւ տեղի, պետական եւ հասարակական աշխատանքների կատարման կարեւորությունը, միջանձնային եւ հասարակական հարաբերությունների պահպանման գիտակցումը նրա մեջ ձեւավորել է բնավորության բարոյական միջուկը: Լինելով գիտնական, ղեկավար եւ կազմակերպիչ՝ տարիների ընթացքում նրա մեջ մշակվել են պարտքի եւ պատասխանատվության զգացում եւ թերությունների նկատմամբ անհանդուրժողականություն: Մարդկանց գնահատելը, սիրելն ու հարգելը հանուն բարոյական արժեքների: Սա է Հովհաննիսյանի գործելակերպի նշանաբանը:

Որպես գիտնական Վ. Հովհաննիսյանը ստեղծել է մանկավարժական պատկերացումների մի ամբողջ համակարգ: Ունենալով բեղուն գրիչ՝ նա հրատարակել է 150 գիտամեթոդական աշխատանքներ, հեղինակ է 35 բուհական եւ դպրոցական դասագրքերի: Դրանք բոլորն էլ նրա գիտամանկավարժական բարձր կարողության, երկնաքաղ աշխատանքի, անսպառ եռանդի եւ ուժեղ կամքի արգասիքն են: Նրա աշխատանքների շատ մասը հրատարակվել է տարբեր լեզուներով:

Ակադեմիկոս Վ. Ա. Հովհաննիսյանի տքնաջան աշխատանքի արդյունքն է միջնակարգ հանրակրթական դպրոցի մաթեմատիկայի ուսուցման հիմնական բովանդակության գիտական սկզբունքների եւ չափանիշների համակարգի մշակումը: Վ. Ա. Հովհաննիսյանի դասախոսությունները նրան բերել են մեծ ճանաչում եւ հարգանք մայր բուհի դասախոսների եւ ուսանողների շրջանում:

Վ. Հովհաննիսյանի ղեկավարությամբ աճել են տասնյակ գիտնականներ: Նա ջանք ու եռանդ չի խնայում մատաղ սերնդի մաթեմատիկական կրթության առաջընթացի, ազգային դպրոցում մաթեմատիկայի դասավանդման արդյունավետության բարձրացման ուղղությամբ: Ակադեմիկոսի ղեկավարությամբ եւ անմիջական հեղինակությամբ ստեղծված տարրական դպրոցի մաթեմատիկայի դասագրքերը, մեթոդական ուղեցույցները նոր եւ լուրջ ավանդ են ազգային դասագրքաստեղծման գործընթացում:

Գիտության եւ կրթության գործին մատուցած մեծ ծառայությունների համար Վ. Հովհաննիսյանը արժանացել է պետական պարգեւների, այդ թվում՝ Խ. Աբովյանի անվան մեդալի:

Ակադեմիկոս Վ. Ա. Հովհաննիսյանին ցանկանում ենք ստեղծագործական երկարակեցություն, նորանոր հաջողություններ կյանքում՝ ի բարություն մանկավարժական գիտության:

Կ. Վ. ՈՍԿԱՆՅԱՆ
ԵՊՀՄ-ի հոգեբանության ամբիոնի վարիչ,
հոգեբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր
Ա. Խ. ՂԱՖԱՐՅԱՆ
ԵՊՀՄ-ի Ֆիզմաթ ֆակուլտետի դեկան

Գրասերների նոր ընկերակցություն Փարիզում

Փարիզում վերջերս հիմնադրվել է «Societe Bibliophilique ANI» անվանումով գրասերների մի նոր ընկերակցություն, որի նպատակն է հայերին եւ Հայաստանին առնչվող գործերի հրատարակումն ու տարածումը Ֆրանսիայում եւ այլուր: Այս մասին է հաղորդում Փարիզի «Յառաջ» օրաթերթն իր հունիսի 2-ի համարում: Ընկերակցության նախագահն է ատամնաբույժ Ժան-Պիեռ Քիբարյանը, գանձապահը՝ նույնպես ատամնաբույժ Ժանին Թորոսյանը, իսկ քարտուղարը՝ բժիշկ Միշել Դերվիշյանը:

Հրատարակության ծրագրված առաջին գործը Մոսկվայում 1934-ին 500 օրինակով լույս տեսած Նիկողայոս Մառի ռուսերեն հատորի թարգմանված տարբերակն է, որն այժմ ընթացքի մեջ է Հայաստանում: Հատորի երկու երրորդն, ըստ լրատվության, արդեն թարգմանված է, եւ նախատեսվում է ամբողջ գիրքը տպագրված վիճակում ներկայացնել Անիին նվիրված Հարություն Գեւորգյանի կազմակերպած ցուցահանդեսին: Հայտնի է, որ Մառը տարիներ շարունակ աշխատել է Անիում, եւ գիրքն արդյունքն է նրա այնտեղ կատարած պրոցումների: Բացի վաճառից, ընկերակցությունը նախատեսել է նաեւ սահմանափակ քանակությամբ թվագրյալ օրինակներ տալ բաժանորդների համար, ովքեր կցանկանան օժանդակել այդ ծեռնարկն ընդհանրապես: Բաժանորդագրության արժեքն է 550 ֆրանկ ներառյալ առաքման ծախսերը:

Հ. Ե.

digitised by A.R.A.R.@

ՄԱՐԶԱԿԱՆ

ՇԱԽՄԱՏ

Հայ շախմատիստների հաջող ելույթները

Երեւանցի գրոսմայստեր Կարեն Մովսիսյանը հիանալի հանդես եկավ Իսպանիայում անցկացված երեք մրցաշարերում:

Սկզբում Կարենը Սարագոսայում երկրորդ-երրորդ տեղերը բաժանեց ռուսաստանցի գրոսմայստեր Եմիլինի հետ՝ վաստակելով 7,5 միավոր (8 միավորով մրցաշարի հաղթող դարձավ ուկրաինացի գրոսմայստեր Կոռնեեւը):

Դրանից հետո Մովսիսյանը երկու հաղթանակ տարավ Կանարյան կղզիներում կազմակերպված մրցումներում: Նա նախ առաջին տեղը գրավեց Տեներիֆեի մրցաշարում: Կարենը 9 հնարավորից վաստակեց 7 միավոր՝ կես միավորով իրենից ետ թողնելով մոտակա մրցակիցներին: Լանզարոտե քաղաքում անցկացված մրցաշարում եւս Կարենը 9 հանդիպումներում 7 միավոր վաստակեց, բայց այստեղ նա հաղթանակը բաժանեց հարավսլավացի գրոսմայստեր Տոդորովիչի հետ:

Հունգարիայի մայրաքաղաք Բուդապեշտում շաս հաջող հանդես եկավ Հայաստանի բազմակի չեմպիոն Աշոտ Անասասյանը: Էլեկտրոնային հիշատակին նվիրված միջազգային մրցաշարում նա գրավեց առաջին տեղը՝ 13 հնարավորից վաստակելով 10 միավոր: Աշոտը շահեց ութ պարտիա, չորս հանդիպում ավարտեց ոչ-ոքի, իսկ մեկում պարտություն կրեց:

Շախմատասերներին հիշեցնենք, որ Անասասյանը վերջերս մրցանակային տեղ էր նվաճել նաեւ Դուբայում ավարտված խոշոր մրցաշարում:

Ամերիկյան Չիկագո քաղաքում ավանդաբար անցկացվող փառատոնին այս անգամ մոտ 900 շախմատիստներ մասնակցեցին: Ուժեղագույնները, թվով 112 հոգի, հանդես եկան գլխավոր մրցաշարում: Նրանց մեջ էին մեծ թվով միջազգային գրոսմայստերներ եւ վարպետներ: Շվեյցարական խաղակարգով, 7 տուրով անցկացված մրցաշարում յոթ գրոսմայստերներ վաստակեցին 5,5-ական միավոր: Ըստ գործակիցների, հաղթողներն աղյուսակում տեղեր զբաղեցրին հետեւյալ հերթականությամբ՝ Ալեքսանդր Բելյավսկի, Գեորգի Կաչեյվիլի, Գրիգորի Կայդանով, Ալեքսանդր Գոլդին, Ալեքսանդր Շաբալով, Դմիտրի Գուրեւիչ, Ալեքսանդր Իվանով:

Չիկագո օփենին մասնակցում էին նաեւ մեր հանրապետության երկու ներկայացուցիչներ միջազգային գրոսմայստեր Արաշես Մինասյանը եւ միջազգային վարպետ Նորայր Քալանթարյանը: Մինչեւ վերջին պահը Մինասյանը հաջողության հնարավորություններ էր պահպանում: Սակայն եզրափակիչ տուրում նա ոիսկի դիմեց եւ տանուլ տվեց հանդիպումը: 4,5 միավորով Արաշեսը գրավեց 16-րդ տեղը: 4 միավոր վաստակեց Քալանթարյանը:

Արաշես Մինասյանը հիանալի հանդես եկավ դրանից հետո անցկացված կայծակնային մրցաշարում: Երեւանցի շախմատիստը 14 հնարավորից 10 միավոր վաստակեց եւ մեկ այլ գրոսմայստերի՝ լեհ Ալեքսանդր Վոյտկեւիչի հետ բաժանեց առաջին-երկրորդ տեղերը: Կայծակնային մրցաշարում շաս հաջող ելույթ ունեցավ նաեւ Նորայր Քալանթարյանը: Նա բաժանեց երրորդ տեղը՝ ընդամենը կես միավորով ետ մնալով հաղթողներից:

ՖՈՒՏԲՈԼ

Կվիճարկեն գավաթը

Շուտով Պարագվայում կանցկացվի Ամերիկայի գավաթի հերթական խաղարկությունը: Աշխարհամասի ուժեղագույն թիմերը նախապատրաստվում են այդ կարեւոր մրցումներին:

Աշխարհի քառակի չեմպիոններ բրազիլացիները սեփական խաղադաշտում երկու հանդիպում անցկացրեցին Հոլանդիայի հավաքականի հետ: Առաջինում ոչ-ոքի (2-2) գրանցվեց: Երկրորդում Բրազիլիայի հավաքականը հաղթեց 3-1 հաշվով: Ընդ որում, առաջին խաղակեսն ավարտվեց 3-0 հաշվով. գոլերը խփեցին Լեոնարդոն (2) եւ Ամորոզոն, միայն երկրորդում հոլանդացիները կարողացան «բրջել» հաշիվը: Հանդիպումն այլի ընկավ երկու թիմերի ֆուտբոլիստների կողմից: Այդ էր պատճառը, որ մրցավարը 5 անգամ կարմիր քարտ ցույց տվեց. խաղադաշտից հեռացվեցին 3 բրազիլացի եւ 2 հոլանդացի ֆուտբոլիստներ:

Բրազիլիայի հավաքականի գլխավոր մարզիչ Վանդերլեյ Լյուքսեմբուրգոն հայտարարել է, որ թիմում չի ընդգրկելու Ռոմարիոյին եւ Էդմունդոյին: Նա իր որոշումը պատճառաբանում է նրանով, որ այդ երկու նշանավոր հարձակվողները չափից ավելի անհատական խաղ են ցուցադրում:

Երկու հանդիպում անցկացրեց նաեւ Արգենտինայի հավաքականը:

Նա նախ ԱՄՆ-ի Չիկագո քաղաքում 2-2 խաղաց Մեքսիկայի թիմի հետ:

Շաս լարված էր Վաշինգտոնում անցկացված ԱՄՆ-Արգենտինա խաղը: Արգենտինացիներն իրենց հնարավորություններից ցածր հանդես եկան: Նրանք բաց թողեցին գոլ խփելու մի քանի հնարավորություններ, նույնիսկ չկարողացան իրացնել 11 մետրանոց տուգանային հարվածը: Ամերիկացիներին հաջողվեց շահել այդ խաղը (1-0): Հանդիպման միակ գոլը 88-րդ րոպեին խփեց փոխարինման մտած Ջոն Մաֆս Մուրը:

Ֆերգյուսոնին՝ ասպետի տիտղոս

«Մանչեսթր Յունայթեդ» թիմի գլխավոր մարզիչ Ալեքս Ֆերգյուսոնը Մեծ Բրիտանիայի թագուհի Էլիզաբեթ երկրորդի ծննդյան օրվա առիթով ասպետի կոչում է ստացել: Նշանավոր մասնագետն իր 15-ամյա մարզչական կարիերայի ընթացքում 12 պատվավոր տիտղոս է նվաճել: Ֆերգյուսոնն իր վերջին հաջողությանը հասավ օրերս, երբ նրա գլխավորած «Մանչեսթրը» եվրոպական երկրների Չեմպիոնների լիգայի եզրափակիչ խաղում 2-1 հաշվով պարտության մատնեց Մյունխենի «Բավարիային» եւ նվաճեց պատվավոր մրցանակը: Գնահատելով անգլիական ֆուտբոլին մատուցած ծառայությունները՝ երկրի վարչապետ Տոնի Բլերը թագուհու առջեւ միջնորդեց պարգեւի արժանացնել մարզչին: Ալեքս Ֆերգյուսոնն այսուհետ սըրի տիտղոս կկրի:

Լավագույնը Զազա Ջանաշիան է

Վրաստանի լավագույն ֆուտբոլիստ է ճանաչվել Մոսկվայի «Լոկոմոտիվի» եւ ազգային հավաքականի հարձակվող Զազա Ջանաշիան: Հետաքրքիր է, որ եվրոպայի առաջնության ընտրական վերջին խաղին Վրաստանի հավաքականի գլխավոր մարզիչ, հոլանդացի Յոհան Բոսկամպը Ջանաշիային չէր ընդգրկել թիմում: Պատճառը խաղից առաջ կազմակերպված հավաքից ֆուտբոլիստի երեքօրյա ուշացումն էր: Լավագույն ֆուտբոլիստի ընտրություններում Ջանաշիան հաղթել է մեծ առավելությամբ: Հարցման մասնակից լրագրողները երկրորդն են ճանաչել Կիեւի «Դինամոյի» պաշտպան Կախի Կալաշեին, իսկ երրորդը մեկ այլ լեգեոնական է՝ անգլիական «Նյուքասլի» հարձակվող Թեմուրի Կեցբայան:

ԹԵՆԻՍ

Սարգսյանը զիջեց կիսաեզրափակիչում

Երկու խոշոր մրցաշարեր ավարտվեցին Լոնդոնում եւ Հալլեում:

Անգլիայի մայրաքաղաքում անցկացված մրցումներում, որտեղ մրցանակային հիմնադրամը 720 հազար դոլար էր, հաղթող դարձավ կրկին աշխարհի լավագույն թենիսիստների ցուցակը գլխավորող Փիթ Սամփրասը (ԱՄՆ): Եզրափակիչում նա 6-7, 6-4, 7-6 հաշվով պարտության մատնեց անգլիացի Թիմ Հենմանին:

Լոնդոնի մրցաշարում փայլուն հանդես եկավ Սարգիս Սարգսյանը: Հայ թենիսիստը մի քանի տոպավորիչ հաղթանակներ տարավ ուժեղագույնների նկատմամբ եւ միայն կիսաեզրափակիչ խաղում զիջեց Հենմանին: Իհարկե, համաշխարհային դասակարգման ցուցակում Սարգսյանը բավականին կբարելավի իր դիրքերը: Այժմ Սարգիսը մեկնել է ԱՄՆ, որտեղ կմասնակցի միջազգային մրցաշարի, առա կվերադառնա Լոնդոն եւ հանդես կգա «Մեծ սաղավարտ» շարքի հերթական մրցումներում՝ Ուիմբլդոնի մրցաշարում:

Խաղում է՝ Սարգիս Սարգսյանը

Գերմանական Հալլե քաղաքում ավարտված մրցաշարի եզրափակիչում հանդիպեցին գերմանացի Նիկլաս Կիֆերը եւ ավեդ Նիկլաս Կուլտին: Հաղթելով 6-3, 6-2 հաշվով՝ գլխավոր մրցանակը շահեց Կիֆերը:

Հալլեի մրցաշարի մրցանակային հիմնադրամը 1 մլն դոլար էր:

ՁԵՌՔԻ ԳՆԴԱԿ

Եզրափակիչում կմրցեն Ռուսաստանի եւ Շվեդիայի հավաքականները

Եգիպտոսում անցկացվող ձեռքի գնդակի աշխարհի տղամարդկանց առաջնությունում որոշվեցին եզրափակիչ խաղի մասնակիցները: Դրանք են Ռուսաստանի եւ Շվեդիայի հավաքականները: Կիսաեզրափակիչներից մեկում աշխարհի ներկայիս չեմպիոն ռուսները դրամատիկ պայքարում 22-21 հաշվով պարտության մատնեցին իսպանացիներին, իսկ շվեդները՝ 23-22 հաշվով՝ հարավսլավացիներին:

Առաջնությունը, չեմպիոնին որոշելուց բացի, ընտրական բնույթ ուներ եւ պետք է անվաներ Սիդնեյի օլիմպիադայի 7 մասնակիցներին: Օլիմպիական խաղերում հանդես գալու իրավունք ստացան Ռուսաստանի, Շվեդիայի, Հարավսլավիայի, Իսպանիայի, Գերմանիայի, Ֆրանսիայի եւ Եգիպտոսի ընտրանիները:

Սիդնեյ-2000-ի եւս 4 մասնակիցներ հայտնի կդառնան Եվրոպայի, Աֆրիկայի, Հյուսիսային եւ Հարավային Ամերիկաների առաջնություններից հետո:

ԲԱՍԿԵՏԲՈԼ

Ո՞վ կտիրի «Արծաթե գամբյուղին»

Որոշվեցին Բասկետբոլի ազգային ասոցիացիայի (NBA) եզրափակիչ փուլի մասնակիցները: Դրանք են «Սան Անտոնիո Սփերզ» եւ «Նյու Յորք Նիքս» թիմերը: «Սան Անտոնիոն» ոչ մի հույս չթողեց «Պորտլենդ Թրեյլ Բլեյզերին»՝ նրան հաղթելով 4-0 ընդհանուր հաշվով: Համեմատաբար համառ պայքարում «Նյու Յորքը» 4-2 հաշվով առավելության հասավ «Ինդիանա Պեյսերզի» նկատմամբ (93-90, 86-88, 92-91, 78-90, 101-94, 90-82):

«Արծաթե գամբյուղին» կտիրի եզրափակիչում չորս հաղթանակ տարած թիմը:

ԽԱՉԲԱՌ

Նախորդ համարում տպագրված խաչբառի դրատախտակները

Ուղղահայաց

1. Օլիգարխիա: 2. Օղերեցա: 3. Հասմիկ: 4. Պասկալ: 5. Զրադաշ: 6. Սոնոլառնաս: 8. Այրիվանք: 9. Սուլամիթա: 14. Թեթեյան: 17. Լուրենիկ: 18. Գագրա: 19. Աբասի: 22. Բարձրաբեն: 23. Սֆրոդիտե: 24. Գիմնազիա: 25. Ազատեցնոն: 27. Կավաբեն: 30. Եղբուանի: 31. Կրեսոս: 32. Կարատե:

Հորիզոնական

7. Օլիմպիադա: 9. Ստավրոպոլ: 10. Մարալիկ: 11. Շագրենի: 12. Անանյան: 13. Մխիթար: 15. Կարին: 16. Ասլանն: 20. Արեւանք: 21. Ալբատրոս: 22. Բայդարկա: 24. Գասկոնիա: 26. Ֆրանկո: 28. Առանձ: 29. Հեկտար: 33. Արմավիր: 34. Ակոստեր: 35. Եղիազար: 36. Պերսեփոնե: 37. Անտոնիոս:



Ուղղահայաց

1. Գետ Ռումինիայում, Դանուբի ձախ վտակը: 2. Դոնի, Դնեպրի ավազաններում XV դ. 2-րդ կեսում հաստատված ազատ ժողովուրդ: 3. Խավարման ժամանակ Արեւի շուրջը երեւացող լուսավոր գոտի: 4. Այթմատովի «Բարդի իմ, կարմիր գլխաշորով» պատմվածքի գլխավոր հերոսը: 5. Վաղ առավոտյան, առավոտ շուտ (արեւմտահայերը շաս են օգտագործում): 7. Խաղաքուղթ: 8. Բուդդայականության մեջ կանոն կամ խորհրդավոր զորություն: 9. Մինասի հայրենի կտավը: 10. Երկնոլորտի զենիթին հակադիր կետը: 15. Ճարտարապետության մեջ գեղարվեստական ոճ: 16. Լարային նուագեցական հին գործիք: 17. Եվրոպական պետության դրամ: 18. Խոսող թռչուն: 20. Նոբելյան մրցանակի դափնեկիր հրեա գրող: 21. Թախանձագին աղաչանք, պաղատանք: 24. Օդաչու, որն առաջինն է փորձարկել խորհրդային կործանիչ ինքնաթիռը: Նրան շնորհվել է «Առաջին օդաչու» կոչումը: 25. Ավստրիացի հոգեբույժ, հոգեբան: 26. Հաճաստեղություն երկնի հարավային կիսագնդում: 28. Հայ իշխան, զորավար, քաղաքական գործիչ: 29. Թաղամաս Երեւանում Ավան-ում: 30. Գետ Ռուսաստանում, Յակուտական ԻՍՍՀ-ում: 31. Շահարգիզազգիների ընտանիքի բազմամյա բույս: 32. Քարտեզների ժողովածու: 33. Գյուղ Հայաստանում, Թալինից հյուսիս-արեւելք:

Հորիզոնական

1. XII դ. Մեքսիկայում ստրած հնդկացի: Ազգություն: 4. Ժողովրդական խոսվածք: հասակ, մարտ, շիտակ իմաստ ունեցող բառ: 6. Ամանուն: 7. Հանքարձման տոնի այլ անվանումը: 9. Հայ ռեժիսոր, դերասան, դրամատուրգ: 11. Վարչական միավոր Բրազիլիայի հյուսիս-արեւելքում: 12. Հանգիստրվածք: 13. Մսից պատրաստված աղխած ուտելիք: 14. Հյուսիսային բարեխառն գոտու ասեղնատերեւ անտառ, անտառային գոտա: 17. «Տախտ, տախտ» կատակերգության գլխավոր հերոսուհին: 19. Ռադիոտեղակայանք: 22. «Վիրտուոզներ» նվագախմբի ղեկավարը: 23. Նոբելյան մրցանակակիր ամերիկացի գրող, «Մեր հոգսերի ծնողը» վեպի հեղինակը: 25. Դրամական միավոր: 27. Լատինական այբուբենի տառ: 28. Կանացի անուն: 30. Վայրի սալորի տեսակ: 32. Աշխարհահռչակ հայ թենիսիստ: 34. Նկարչության մեջ նախանկարչ, հիմնանկարչ: 35. Լեզվակավոր փողային նվագարան, տարածված է Կովկասում: 36. Խայթող, ծակող բույս: 37. Միջին դարերում օգտագործվող աղեղնավոր նուագեցական գործիքների ընդհանուր անվանումը: 38. Քաղաք Էստոնիայում: 39. Բարձրագույն հոգեւոր աստիճանը ժողով մի շարք ուղղափառ եւ բողոքական եկեղեցիներում:

Կազմեց Տ. ՀԱԿՈԲՅԱՆԸ

digitised by A.R.A.R.@

ԱԶԳ

Օրվա հետքով

ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

25 նախարար՝ Վազգեն Սարգսյանի գլխավորությամբ

Սկիզբը էջ 1

Կադրերն են որոշում ամեն ինչ

Խորհրդային այս կարգախոսը հավերժ է: Նոր կառավարությունում հին կադրեր են, եւ նոր դեմքեր գրեթե չկան: Հայաստանյան կադրային շտեմարանը սղաբվե՞լ է, թե՞ գործում է «Փորձած բանն անփորձ մածնից լավ է» ազգային-ոգեղեղական սկզբունքը, դժվար է ասել: Այնուհանդերձ, մի նոր եւ դաշտանության ոլորտում գուցե նաեւ բարձրագոյն աստիճանում է դաշտանության նախարար Վաղարշակ Հարությունյանը, որը կադրային զինվորական է: Նրա նշանակումը կարող է նախանշել ռազմական շինարարության մեր գործում նոր էջ: Ինչպես հավաստում էր նախորդ նախարար, այժմ վարչապետ Վազգեն Սարգսյանը, կառուցվածքային բարեփոխումների եւ խանգարման ծեւավորման փուլը հայոց բանակն ավարտել է, աջքեւում որակական բարեփոխման շրջանն է՝ ի հեճուկս խմբագրությունների:

Խորով Հարությունյանը վերագավ իր տեղը գործադիր իշխանությունում՝ ժառանգելով Դավիթ Ջաղոյանի դաշտոնը սարածքային կառավարման նախարար: Խորով Հարությունյանը սույն ոլորտում թրված է. ժամանակին գլխավորում էր սարածքային կառավարման հարցերի հանձնաժողովը: Հարկային տեսչության նախկին պետ Սմբատ Այվազյանը արժանացավ դաշտոնական առաջընթացի՝ այսուհետ նա ղեկավարելու է բազմախոստում անուն կրող պետական եկամուտների նախարարությունը: Հարկային տեսչության եւ մաքսային վարչության կարգավիճակի բարձրացումը թելադրված է նոր կառավարության համար այս տայնի դերի ճգրիտ գիտակցմամբ: Եկամուտներն են որոշում ամեն ինչ, եւ առա միայն կադրերը:

Ֆինանսների նախարարությունն, ինչպես արդեն հայտնի էր, ղեկավարելու է Լեւոն Բարխուդարյանը, իսկ էկոնոմիկայի ոլորտը, որը Վազգեն Սարգսյանի գլխավորությամբ կարծես դուրս է գալու Սոխարտիկի վիճակից (գուցե հանկարծ արեւադո՞ւստ դառնա), տրվում է նախկին վարչապետ Արմեն Դարբինյանին: Դավիթ Ջաղոյանը ղեկավարելու է էներգետիկայի նախարարությունը: Կառավարության հնաբնակ Գագիկ Սարգսյանը վերջապես գիջեց ասպարեզը. արտադրական ենթակառուցվածքների գործունեությունն այսուհետ կիսամակարգի նախկինում դաշտանության փոխնախարար Վահան Շիրխանյանը, որը հայտնի է իր փորձառությամբ: Այսպիսով Վազգեն Սարգսյանի երեք տեղակալները դարձան նախարար Վահան Շիրխանյան, Լեոնարդ Պետրոսյան, Գեւորգ Վարդանյան: Դաշտանության նախարարությունը մեր ֆադրային ամենավստահելի դարբնոցն է:

Ներքին գործերի նախարար դարձավ Սուրեն Աբրահամյանը, իսկ Մեժ Սարգսյանը վերադարձավ ազգային անվտանգություն:

Նորանշանակ նախարարներն են Ռուբեն Տոնոյանը, որը կառավարության միակ ՀԺԿ անդամն է՝ փոսի եւ հեռահաղորդակցության ոլորտ, Հայր Հովհաննիսյանը՝ հաղորդակցության նախարար, վերջին ժամանակին զբաղեցրել է էներգետիկայի փոխնախարարի դաշտոն՝ շինարարության գծով եւ կառավարության ամենաարագ անդամն է: Կրթության եւ գիտության նախարարությունը ՀՅԴ-ն ստիպված էր զիջել անկուսակցական մասնագետի՝ ԵՊՀ նախկին գիտության գծով դրոեկտոր Էդվարդ Ղազարյանը նշանակվել է կրթության եւ գիտության նախարար: Ռազմիկ Սարգիսյանը, որ նախորդ ԱԺ-ում դաշտանության, ազգային անվտանգության եւ ներքին գործերի հարցերի հանձնաժողովի նախագահն էր, այս կառավարությունում կդեկավարի սոցիալական ապահովությունը: Լեոնարդ Պետրոսյանը, ինչպես փաստեցին, դարձել է օտերաստիվ հարցերի նախարար: Շահեն Կարամանուկյանը վերանշանվել է կառավարության աշխատակազմի ղեկավար-նախարարի դաշտոնը: Քաղաքական միջանցահովիկները անսասան դիմավորեցին Վարդան Օսկանյանը՝ արտգործնախարար, Հայկ Գեւորգյանը՝ արդյունաբերության եւ առեւտրի նախարար, Հայկ Նիկողոսյանը՝ առողջապահության նախարար, Երվանդ Ջախարյանը՝ տրանսպորտի նախարար, Ստեփան Մնացականյանը՝ վիճակագրության, դեսեզիսդրի, վերլուծության նախարար, Դավիթ Հարությունյանը՝ արդարադատության նախարար, Գեւորգ Վարդանյանը՝ բնապահպանության նախարար եւ կառավարության միակ դաշնակցական նախարար Ռոլանդ Շաքոյանը՝ ծառայության. երիտասարդության հարցեր եւ սպորտ: Գագիկ Շահբազյանը դեսպանությունից անցնում է գյուղատնտեսության նախարարություն:

Հայաստանյան ուրերորդ կառավարությունը ծեւավորված է հին եւ բարի ժամանակներից հայտնի խոջաճանոթ դեմքերով, ցանկանք նրանց նոր աշխատանքային եռանդ՝ այս անգամ հաղթական կառավարության կազմում եւ արժանապատիվ ներկայի ու ապագայի ապահովում Հայաստանի համար:

«Երեւանի կոնյակի գործարան» ՓԲԸ

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

«Երեւանի կոնյակի գործարան» ՓԲ ընկերությունը հայտարարում է մրցույթ՝ Այգավանի մասնաճյուղում հետեւյալ թափուր աշխատատեղի համար.

• ՏՆՏԵՍԱԳԵՏ

Ներկայացվող անհրաժեշտ պահանջներ՝

✔ մասնագիտական բարձրագույն կրթություն,
✔ համապատասխան աշխատանքային փորձ,
✔ անգլերեն կամ ֆրանսերեն լեզուների իմացություն,
✔ համակարգչային հմտություններ:

Ցանկացողները ս. թ. հունիսի 17-ից 25-ը պետք է ներկայացնեն հետեւյալ փաստաթղթերը.

■ դիմորդի թերթիկ (թերթիկը կարող եք ձեռք բերել ընկերության պահակային ծառայությունում),
■ լրացված աշխատանքային գրքույկից,
■ բարձրագույն կրթության վկայականի պատճեն,
■ լուսանկար

Ցանկացողները պետք է դիմեն՝
375082, Երեւան, Ծովակալ Իսակովի պող. 2
Հեռ.՝ 52-44-56, 54-00-00
Մագդա Մովսիսյանին

YEREVAN BRANDY COMPANY
OFFRE D'EMPLOI

Secrétaire-assistante de haute qualification

Cahier de charges
• excellente connaissance du français (oral et écrit)
• connaissance de la deuxième langue serait souhaitable (surtout l'anglais)
• informatique :
- parfaite connaissance de l'ordinateur : MS Word, MS Excel, Power Point
- capacité de faire des traductions compliquées, ainsi que des interprétations du français en arménien et vice-versa dans des délais serrés,
• dynamisme : habileté d'effectuer quelques opérations en même temps / coups de fil à passer, message à prendre, courrier à suivre (présentation, traduction, classification, prendre connaissance des dossiers en cours)
• expérience de 2 ans (minimum)
• esprit d'équipe
• qualités souhaitables : bienveillance, amabilité, sociabilité

Les candidats n'auront qu'à présenter les documents suivants :
• CV et 2-3 références
• fiche à remplir (récupérer à l'entrée de l'usine)
• 2 photos

Délai de recrutement: **16/06/99 - 25/06/99**
Personne à contacter: **Magda Movsissian**
Adresse: **Yerevan 375082 , Isakov 2 Ave.**
Tel.: **54 00 00; 52 44 56**

«Եվրասիա» հիմնադրամի կովկասյան տարածաշրջանի երեւանյան գրասենյակը
Հայտարարում է մրցույթ հետեւյալ թափուր աշխատատեղի համար

ՄԱՄՈՒԼԻՆ ԱՋԱԿՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՓՈԽՂԵԿԱՎԱՐ

Թեկնածուներին ներկայացվող պահանջները՝

■ Բարձրագույն կրթություն
■ Աշխատանքային փորձ պոլիգրաֆիայի ոլորտում
■ Անգլերենի, հայերենի եւ ռուսերենի տիրապետում
■ Համակարգչի հետ աշխատելու ունակություն
■ Կազմակերպչական ունակություններ եւ կոլեկտիվում աշխատելու կարողություն

Մրցույթին մասնակցելու համար մինչեւ 1999 թ. հունիսի 25-ը ներկայացնել դիմում եւ համառոտ աշխատանքային կենսագրություն անգլերեն լեզվով)
«Եվրասիա» հիմնադրամի կովկասյան ներկայացուցչության տնօրենի անունով հետեւյալ հասցեով՝ Իսահակյան փ. 22, բն. 11, Երեւան, Հայաստանի Հանրապետություն
Հեռ. 52-24-95, 58-55-98, 56-16-26, AT&T/ֆաքս. 151-824
էլեկտրոնային փոստ, resume@eurasia.am

ՎԱՃԱՌՎՈՒՄ է

Պարսկական բրեզենտ՝ մաչելի գներով:

Հեռախոսներ՝
277076,
448970

ՁԵՌՆԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԱՆՎՃԱՐ

Հայաստանի առեւտուրը ներկայացնող «ԱՊՐԱՆՔՆԵՐ ՄԵԾԱԾԱԽ ԵՎ ՄԱՆՐԱԾԱԽ» տեղեկագիրքը ձեռնարկություններին տրամադրվում է անվճար:

Զանգահարել 581351, 569393 «ՍՓՅՈՒՌ»

ՀԵՌՈՒՍՏԱՏՍՐԱԳՐԵՐ

16 հունիս

9.00 Հայլուր
9.20 Բարի լույս, Հայաստան
10.20 Հեռուստասերիալ «Սոխարտը»
11.15 Արտակարգ պլիտ
11.25 Գ/Ֆ «Մեծ թակարդ»
13.00 Հայլուր
13.15 Միասին («Միր»)
17.00 Հայլուր
17.20 Փաստագրական կինոյի ժամ. «Ինքնորդ պլիտ. Հովհաննես Արվազովսկի»
18.00 Հեռուստասերիալ «Սոխարտը»
19.00 Պարմանի
19.30 Հեռուստասերիալ «Շների աշխարհը»
20.00 Ասոնկոս
20.25 Արտակարգ պլիտ
20.35 Տունտունիկ
21.00 Հայլուր
21.30 1 լուր
21.40 Հեռուստակրաստոզ
21.45 Այսօր
22.10 Ծիծաղի տուն
23.00 02
23.40 Հենց այնպես
00.00 Հայլուր
00.20 Ուշ երեկոյան
Արբանյակային հեռարձակվածք.
02.00 Հեռուստասերիալ «Իմ երկրորդ մայրը»
03.00 Բարի լույս, Հայաստան

09.00 Տոնար
11.00 Գ/Ֆ «Աստղային պատերազմներ» (3-րդ մաս)
19.00 Սուլտեր
19.30 Սուրհանդակ
19.50 Գիտաստղեր
20.15 Կամ... կամ
21.05 Նժար
21.30 Սուրհանդակ
22.00 Գ/Ֆ Օլեգ Բասիլաշվիլին «Սենսացիոն մարտոն» լիրիկական կոմեդիայում
23.30 Սուրհանդակ
00.00 Անդորր
00.05 Մի անգամ
00.10 Սուք սենյակ
00.30 Ֆասոն (Fasion ծրագրի շաբաթվա ընտրանի)
00.45 Գիշերային կինոտեսարան. Նիկոլաս Քեյջը «Հրեշակների հաղթը» դրամայում
02.30 Սուրհանդակ

Մշակույթ
19.00 Մուլտֆիլմ «Մաուգլի» (3-րդ մաս)
19.10 Սանկտական հաղորդ
19.20 Բնաշխարհ. «Կենդանիները նույնքան կատակում են»
20.10 Մի նկարի պատմություն. Ս. Սարյան
20.30 Լուրեր
21.05 Սերիալ «Ծովափնյա կանայք» (9-րդ մաս)
21.45 Միրեցեր գմիտանս
21.50 Հայ աստղեր. Ցիվանի (1-ին հաղորդում)
22.20 Սեկտաքային էկրան. «Կատիլուս»
23.50 Լուրեր

7.00 Բարի առավոտ
10.00 Նորություններ
10.15 Սերիալ «Հանուն սիրո»
11.30-15.45 Բիզնես TV
16.00 Նորություններ
16.15 Սերիալ «Շենծաղ Հարին»
16.45 Հրաշալի ընկերախումբ
17.00 Ցունգլիների կանչը
17.30 ...Մինչեւ 16 եւ բարձր
18.00 Սերիալ «Հանուն սիրո»
19.00 Նորություններ
19.15 Դիմակներ-ցոու
19.45 Այստեղ եւ հիմա
20.05 Մարդը եւ օրենքը
20.45 Գ/Ֆ «Տիտանիկ» (2-րդ մաս)
21.45 Բարի գիշեր, երեխաներ
22.00 ժամանակ
22.40 Քերեւս
22.55 Գ/Ֆ «Ոստիկանների ընտանիքը» (դերերում Ջ. Բոնսոն, Ղ. Բոլդուին)
00.30 «Խաղաղաստեր վագրը». Տիգրան Պետրոսյանի 70-ամյակին
01.00 Նորություններ
01.20 Սերիալ «Բաղդ-3»

8.00-10.45 Բարի լույս, Ռուսաստան
8.20 Բոլորի տարբերին
8.45 Հեռուստախաղ «Հաղորդումների ծրագիր»
10.15 Հերթապահի բաժանմունք
10.45 Սոչանվեր փոստով
11.10 Սերիալ «Սիկերի»
12.00, 15.00, 18.00, 21.00, 01.35 Լուրեր
12.35 Սերիալ երեխաների համար «Փոքրիկ բալերինաները»
13.30 Իմ ընտանիքը
14.30 Խանութ բազմոցի վրա
15.35 Սերիալ «Անտոնելլա»
16.25 Սերիալ «Հարուստներն ու նշանավորները»
17.15 Երաժշտություն. երաժշտություն...
17.25 Սերիալ «Սասանի հանքերը»
18.30 Աշխարհ
18.55 Սիվեյա. գեղեցկության գաղտնիքները
19.05 Մուլտֆիլմ «Հերիաթ հինգ անուսնու մասին»
19.15 Հոմեոպատիա եւ առողջություն
19.20 Սերիալ «Ինքնենք Գարինի կործանումը»
20.35 Պատերազմը կնոջ դեմ չունի. վավերագրական ֆիլմ «Կռակել էի ուզում...»
21.40 Մանրամասներ
21.50 Ինքդ քեզ օգնիր
22.25 Կինոյի ժամ. կատակերգություն «Հիմար է, բայց կարգադրի» (Ֆրանսիա)
00.15 Մանուսակագույն մուտ
01.20 Հերթապահի բաժանմունք
02.05 Ավտոտոմ